№ 165 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 30 ՅՈՒԼԻՍԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 30 ՅՈՒԼԻՍԻ № 165

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
Соломоновская ул., № 21.
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 5 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

1914 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1915 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 ռուբլին, ՁՐԻԱԲԱՐ կը ստանան հետևեալ 2 գրքերից մէկն ու մէկը. «ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 Թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» Վ. Քինի։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՊԱԿԷ
յայտարարում է ի գիտութիւն ընդհանրութեան, որ շոգենաւային հաղորդակցութիւնը արտասահմանի հետ ընդհատված է։ Ընկերութեան շոգենաւ «ԻՕՆԻՆ», որ պէտք է մեկնէր Բաթումից Մարսէյլ 31 յուլիսի ս./թ. (13 օգոստոսի նոր տոմարով) չի մեկնի ցնոր կարգադրութիւն։
ա. 741. 1—1

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԱՇԽԱՐՀԷ-ԱՇԽԱՐՀ
ԿԱՄ
20,000 ՎԵՐՍՏ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆԻ
—(բազմաթիւ պատկերներով)—
Հատոր Առաջին, պրակ I.
Գինն է 50 կոպ.
Վաճառվում է բոլոր հայ գրավաճառանոցներում։ Պահեստը «Գեղարուեստի» խմբագրատանը, Թիֆլիս, Վանքի Մեծ փ. № 4. Օտար տեղերից դիմել՝ Тифлисъ, въ ред. «Гехарвестъ». կամ՝ Tiflis (Caucase) Rédaction «Gegharvest».
Շարունակվում է Ա. հատորի բաժանորդագրութիւնը (400 մեծադիր երես, 200-ի չափ կլիշէներով և 10 առանձին թերթ գունաւոր պատկերներով)։
Գինն է 4 ռուբլի։
(չ.) ա. 714. 3—3

ԴՈԿՏՈՐ
Ա. Դ. ՇԱՀԲԱԶԵԱՆԸ
ԲԵՐԼԻՆՈՒՄ
Ասիստենտ Բերլինի համալսարանի Charité հիւանդանոցի
Շարունակում է ընդունել Գերմանիա դիմող հիւանդներին և խորհրդակցութիւններ է կազմում մասնագէտ-պրոֆեսորների հետ։
Նոր հասցէն՝ Берлинъ, Фридрихштрассе 133 а. Телефонъ Норденъ 34—69. Berlin, Friedrichstr. 133 a.
(օ. մ.) ա. 391. 100—40

ՄԱՐԴԸ ԾՐԱԳՐՈՒՄ Է, ԲԱՅՑ ԳԱՂԱՓԱՐԸ ՅԱՂԹՈՒՄ Է

Տիեզերական պատմութեան մէջ մենք չը գիտենք այնպիսի դէպքեր, որոնց ականատես ենք այժմ, երբ «ազգք ազինք» միմեանց դէմ են դուրս եկել և վիթխարի, հսկայական պատերազմ սկսել միմեանց դէմ։ Եւ թէև ներկայ պատերազմը երկու խոշոր ազգութիւնների—տեւտոնների և սլավների—պայքար է, մի պայքար, որ վաղուց պատրաստվում և զգացվում էր ու հետզհետէ անխուսափելի դառնում, բայց այդ երկու խոշոր ազգութիւնների, այդ երկու խոշոր քաղաքակրթական ոյժերի՝ գերմանականութեան և սլաւօնականութեան շուրջը համախմբվել են և այլ ազգեր, այլ ժողովուրդներ՝ լատինական, սաքսօնական ծագմամբ։ Ֆրանսիացիները, անգլիացիները, բելգիացիները ստիպված եղան նոյնպէս հանդէս գալ։ Եւ եթէ ճշդվի այն լուրը, թէ նոյնիսկ Հեռաւոր Արևելքը շարժվում է, և Եապօնիան, Անգլիայի դաշնակիցը, արդէն թշնամական գործողութիւններ է սկսել Գերմանիայի դէմ, գրաւելով Գերմանիային պատկանող Կիօ-Չաու չինական գաղութը, այդ դէպքում պատերազմը ոչ թէ համաեւրոպական է, այլ և համաշխարհային կը դառնայ։ Կարող է պատահել, որ Եապօնիայի հանդէս գալը ստիպի Ամերիկային ևս հանդէս գալ, կարող է պատահել, որ Թիւրքիան և Բուլղարիան ևս, որոնք առ այժմ չէզոքութիւն են յայտարարել, բայց զօրահաւաք են կատարում, նոյնպէս միջամտեն, իսկ այդ հանգամանքը ստիպի Ռումինիային և Յունաստանին ևս պատերազմի դաշտն իջնել—և այն ժամանակ ոչ միայն Հեռաւոր, այլև Մերձաւոր Արևելքը կը բռնկի պատերազմական բոցով։

Շատ հաւանական է, որ մենք, ժամանակակիցներս, տեսնենք կործանումը և անկումը մի ահեղ կայսրութեան, որ ստեղծվեց 1870—71-ին, այն է՝ գերմանական կայսրութեան. շատ հաւանական է, որ մենք ժամանակակիցներս տեսնենք քայքայումը մի մեծ կայսրութեան, որ գոյութիւն ունի ամբողջ դարեր, այն է՝ Աւստրիայի քայքայումը։

«Խորհուրդ մարդկան, կամք Աստուծոյ», ասում է ժողովրդական իմաստութիւնը։ Այն ծրագիրը, որ գերմանական խրոխտ և ամբարտաւան կայսրը, Բիսմարկի աշակերտը, երկնել և յղացել է՝ կայծակի արագութեամբ ոչնչացնել Ֆրանսիան, ապա Աւստրիայի աջակցութեամբ տապալել ռուսական հզօր և հաստաբուն կաղնին, ու հաստատել իր տիրապետութիւնը ամբողջ Եւրոպայի վրա, կարող է վերջանալ նրանով, որ գերմանական հզօր և հաստաբուն կաղնին կը տապալվի և ինքն Վիլհէլմ II, որ իր ցնորքների մէջ երևակայում է իրան մի նոր աշխարհակալ Նապոլէօն I, կարող է ենթարկվել Նապոլէօն III-ի վիճակին և իր անկմամբ տապալել նաև իր պապի հիմնած կառավարութիւնը։

Եւ մարդկութեան համար մեծ բարերարութիւն և բարիք կը լինի տապալումը այդ երկու պետութիւնների՝ որոնց աւերակների վրա կը բուսնեն և կը ծաղկեն նոր, երիտասարդ պետութիւններ, որովհետև այսօր ոչ մի կասկած չը կայ, որ այն սարսափելի միլիտարիզմը և սպառազինութիւնները, որոնց ծանրութեան և բեռի տակ հեծում, մաշվում էին ազգք և ազինք, առաջ բերեց երկրագնդի վրա երեքպետեան դաշնակցութիւնը, որի գլխաւոր ոյժերն են Գերմանիան և Աւստրիան. այդ դաշնակցութիւնն է միշտ սպառնալիք հանդիսացել խաղաղութեան և ներկայ համաշխարհային պատերազմի առաջ բերողը նա եղաւ. հետևաբար, նրա ջնջումը մի բարիք կը լինի մարդկութեան համար, բարիք նոյնիսկ գերմանական ժողովրդի և մանաւանդ աշխատաւոր դասի համար։

Վիլհէլմ II, ծրագրելով պատերազմ, մոռացել է մի ճշմարտութիւն, որ, կոպիտ ոյժը թէև յաճախ յաղթող է հանդիսանում, բայց երբեմն և խորտակվում, փշրվում է գաղափարի, իդէաների առաջ. Եւ ահա բազմաթիւ ազգեր անակնկալ կերպով արշաւեցին Գերմանիայի դէմ և մի կուռ միութիւն կազմեցին, որովհետև պատերազմը Գերմանիայի դէմ՝ համաշխարհային խղճմտանքի և արդարութեան կռիւ է, կռիւ պատուի և սեփական իրաւունքների։ Եւ այդ գաղափարին ընդհարվելով տեւտոնական կոպիտ ոյժը, անշուշտ, կը ջախջախվի խայտառակութեամբ և չարաչար։

Եւ թէև մարդը ծրագրում է, բայց յաղթում է գաղափարը։

Այսօր Գերմանիան և Աւստրիան մարմնացումն են կոպիտ ոյժի, անարդարութեան, իսկ Ռուսաստանը, Ֆրանսիան, Անգլիան, Բելգիան, Սերբիան, Չեռնոգորիան՝ մարմնացումն արդար վրէժխնդրութեան բռնակալի դէմ։

Հ. Առաքելեան

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

27 և 28 յուլիսի

ԲՐԻՒՍՍԵԼ.—Գերմանական մի հեծելազօր, Մաաս գետն անցնելուց յետոյ, համարեա բոլորովին սրի քաշվեց բելգիական հեծելազօրից։

Հրատարակված է Թագաւորի հրամանը, որի մէջ ասված է, թէ երրորդ զօրաբանակը և 15-րդ խառն գումարտակը, որոնք ենթարկվեցին յարձակման իրանցից 4 անգամ աւելի ոյժերից, վանեցին բոլոր յարձակումները։ Ոչ մի բերդ առնված չէ։ Լիէժը տակաւին նրանց ձեռքումն է։ Ձեռք են ձգված դրօշակներ, շատ գերիներ։ Թագաւորը ազգի անունից ողջունում է Լիէժին հերոսական դիմադրութեան համար։

Զինւորական մինիստրը յայտնեց, որ Անտվերպէնում բոլոր ինքնապաշտպանողական աշխատանքներն աւարտված են։

Լիէժի դէմ գործող գերմանացիք կազմում են գերմանական երրորդ զօրաբանակը, բաղկացած եօթներորդ, իններորդ և տասներորդ զօրաբանակների մասերից։

Բրիւսէլ եկած վիրաւոր բելգիացի զինւորները պատմում են, որ գերմանացիների գնդակները բառիս բուն նշանակութեամբ ընկած են 5—6 փուտ բարձրութեամբ։

Զինւորական մինիստրի ստացած հաղորդագրութիւնները պարզում են, որ բելգիական Լիւկսէմբուրգում տեղի է ունենում գերմանական և ֆրանսիական զօրքերի ճակատամարտ։

ՓԱՐԻԶ.—«Matin»-ը հաղորդում է, որ Լիէժի դէմ գործող գերմանացիների խնդիրը զինադադարի մասին արդասիք է մթերքների բացակայութեան։

Յայտնի անտիմիլիտարիստ Էրվէն խնդրում է ընդունել իրան զինւորական ծառայութեան։

Անգլիական զօրքերը ափ են իջնում օրինակելի կարգ ու կանոնով։

Անգլիան զէնքի է կոչել 200,000 հոգի, որոնցից 20,000 արդէն ափ են իջեցված Օստէնդում, Կալէում և Դիւնկէրկում։

Յուլիսի 25-ին Բարօմեյցայի մօտերը, կատաղի դիմադրութիւնից յետոյ վերցված է Ալտկիրխէնը։ (?) սկսում են լուրջ կռիւ գերմանացիների դէմ Միւլհաուզէնի ուղղութեամբ։

Ֆրանսիական զօրքերը գրաւեցին Վիկը և Միջին Վիկը։

ԲՐԻՒՍՍԵԼ.—Հաղորդում են, որ գերմանական զօրքերը շարունակ տեղափոխութիւններ են կատարում բելգիական դաշտային զօրքին մինչև ֆրանսիացիների գալը՝ ամբակոծելու նպատակով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Էյդկուննէնի մօտ տեղի ունեցած ճակատամարտում սպանված գերմանացիների մեծամասնութիւնը երևացին պրուսական 33-դ հետևակ գնդի երկրորդ գումարտակի զինւորներ։ Այնտեղ նաև մենք ձեռք ձգեցինք մի գնդացիր։ Հեծելազօրի գլխավերևում թռչում էր գերմանական մի աէրօպլան։

Լիէժի լիակատար անձնատուր լինելու մասին հաստատ տեղեկութիւն ստացված չէ։ Զինադադար կար, տևեց շատ կարճ։ Զինադադարը վերջանալուց յետոյ կռիւը, ըստ երևոյթին, չը շարունակվեց։ Բելգիացիք կարծում են, որ զինադադարը հարկաւոր էր գերմանացիներին, որպէսզի դաշտային զօրաբանակները Լիէժի տակ փոխարինեն լանդվէրով։ Հոլլանդական երկրով գերմանացիների անցնելը էական վնաս հասցրեց Բելգիային։ Այն հանգամանքը, որ Հոլլանդիան չէր պաշտպանում իր չէզոքութիւնը և թոյլ տուեց անցնել գերմանացիներին անարգել, կունենայ, ինչպէս ենթադրում են, լուրջ հետևանքներ Հոլլանդիայի համար։

Օգոստոսի 8-ին Գերմանիան զէնքի է կանչելու բոլոր 17—45 տարեկան տղամարդկանց։

Ստալուպէնէնից գերմանական արտիլէրիան ռմբակոծում էր թշնամու դիրքերը հետախուզող մեր հեծելախմբերին։

Ռուսաց զօրքերը մտան աւստրիական երկիրը Սերէդ գետի հովտով, նեղելով թշնամու առաջապահ գնդերին։

Անդրեէվ քաղաքը գրաւված է աւստրիացիներից։

Կիէվի զինւորական շրջանի սահմանում թշնամին գրաւել է բաձվիլօվեան մաքսատունը։

Պրէյկուլս կայարանի մօտ, Մէմէլից ոչ հեռու, երևան են հանվել գերմանական աւտոմօբիլներ գնդակացիրներով։

Առաջին դրագունեան գնդի սպանված գերմանացիների թամբերի մէջ գտնվել են Կօվնայի ամրութիւնների քարտէզները։

Մեզ մերձակայ գերմանական երկաթուղիների կայարաններում երևացել են զինւորական գնացքներ հետևակ գնդերով։

Յուլիսի 25-ին գերմանական «Գեբէն» և «Բրէսլաու» ռազմանաւերն անցան Ցունաստանի մօտով, դիմելով դէպի Դարդանել։

Լիւժնիւով գիւղաչէնից յետ մղվեց աւստրիական լանդշտուրմիստների մի զօրամաս, որ փութանակի ճողոպրեց։

Անգլիայում զէնքի կանչված լրացուցիչ 100,000 պահեստի զինւորներին արդէն ժողովում են շտապով։

Գերմանական աէրօպլանները ամեն օր թռչում են Կօվնայի ուղղութեամբ։

Շատ սահմանամերձ գիւղերում երևացել են դաշտային զօրքերին փոխարինելու համար լանդվէրնեան հետևակ ու հեծեալ զօրամասեր։

Գերմանիայի սահմանում լուրջ ընդհարումներ չեն եղել։ Տեղի են ունենում անընդհատ մանր ընդհարումներ։

ԼՈՆԴՈՆ.—Հաղորդում են Բրիւսէլից, որ յուլիսի 27-ին Լիէժի ամրոցները դեռ դիմադրում են։ Կէսօրին գերմանացիք ռմբակոծեցին ամրութիւնները, սակայն ապարդիւն, գնդակների պակասութեան պատճառով։

Թիվէում (Նամիւր գաւառ) գերմանական ուլանների պահակախումբը գերվել է բելգիացի ժանդարմներից։

Բեռլինից պաշտօնական հեռագիրը հաղորդում է, որ գերմանական զօրքերը գիշերը գրաւել են Լիէժը։ Բելգիացիների կորուստները խոշոր են. մօտ 4000 բելգիացի գերվել են և տարվում են Գերմանիա։ Այստեղ մատնանշում են, որ գերմանացիք չեն յիշում ամրոցների առման մասին, ուստի և ճիշդ է բելգիական այն հաղորդագրութիւնը, թէ ամրոցները դեռ պաշտպանվում են։

Բրիւսէլից պաշտօնապէս տեղեկացնում են, որ Լիէժը շրջապատված է չորս կողմից գերմանացիներով, սակայն բոլոր բերդերը բելգիացիների ձեռքումն են։

Ծովակալութիւնը յայտնում է, որ երեք գերմանական ստորջրեայ նաւերը ռմբակոծեցին անգլիական յածանաւերի նաւատորմերին, վնաս չը պատճառելով։ Մի ստորջրեայ նաւ ջրասոյզ է արված։

Րէյտէրի գործակալութեանը տեղեկացնում են Բրիւսէլից. «Գործող զօրքի գլխաւոր շտաբը յայտնում է, որ գերմանական զօրքերի դիրքերը շատ քիչ փոփոխութեան ենթարկվեցին շաբաթ օրից։ Առաջացած զօրամասերը նահանջեցին ֆրանսիացիների յաղթական գրոհից։ Ասում են, որ այժմ ֆրանսիացիք և բելգիացիք միաժամանակ յարձակման կը դիմեն համաձայն առաջուց մշակված ծրագրի»։

ՓԱՐԻԶ.—Հավասին հաղորդում են, որ Լիէժը գերմանական զօրքերի ձեռքով վերցնելու տեղեկութիւնը սուտ է։ Գերմանացիք նահանջեցին մեծ կորուստով։

ՓԱՐԻԶ.—Ֆրանսիացիները շտապով ամրացնում են Միւլհաուզէնը և Ալտկիրխը, ունենալով առաջներում ամրացած Լեզգարդը։

Բազմաթիւ մանր ընդհարումներ տեղի են ունենում ողջ ռազմագծի վրա։

Գերմանացիք և ֆրանսիացիք ստացան օժանդակ օգնութիւն։

Ֆրանսիացիների կորուստը Ալտկիրխում 100 սպանվածից և վիրաւորվածից չի անցնում։

Ֆրանսիական կառավարութիւնը վճռեց զինւորական շքադրամ մատուցել բելգիական Թագաւորին։

ՓԱՐԻԶ. — (Շտապ)։ Ֆրանսիական զօրքերը մտան Միւլհաուզէն։

Փարիզում ձերբակալվել են մի շարք լրտեսներ, որոնցից շատերի մօտ գտնվել են անթել հեռագրի գործիքներ և ռումբեր, որոնցով պէտք է փչացնէին երկաթուղագծերը։

Գերմանացի հեծեալ զինւորները, որոնք գերվել են ֆրանսիացիներից, քաղցած էին։

Գերմանացի զինւորական գերիները, որոնց տարել են Բրիւսէլ, միաբերան յայտնում են, թէ ոչինչ չեն հասկանում ներկայ դէպքերից։ Նրանց ասված էր, որ նրանք Բելգիա կը մտնեն բելգիացիների կոչով ֆրանսիացիներին արտաքսելու համար։ Առաջին գնդակների ժամանակ նրանք դեռ կարծում էին, թէ գործ ունեն ֆրանսիացիների հետ, և ոչ թէ բելգիացիների հետ։

Հաստատվում է, որ գերմանացիք Միւլհաուզէնից հեռանալուց յետոյ նահանջում են դէպի Նէյբրեյզ։ Նահանջի ժամանակ, նրանք հրդեհեցին շատ տներ ու մթերավաճառ խանութներ, կտրեցին Գարդի անտառը։ Գերմանացիք ահաբեկում են Էլզասի բնակիչներին, յայտնելով որ անգթաբար կը գնդակահարեն բոլոր կասկածելի անձանց, բայց և այնպէս ազգաբնակութեան խանդավառութիւնը աճում է։

Գերված սաքսոնացիք ասում են, որ Սաքսոնիան միայն ցաւակցութեամբ է մասնակցում պատերազմին։

Գերմանացիք Բելգիայում զգում են ուտելիքի պակասութիւն։ Հաստատվում է, որ նրանք Բելգիա մտան առանց մթերքների պաշար վերցնելու։ Առանձին պահակախմբեր դիմում են ուտեստեղէն գտնելու։

Գրանպօպօ քաղաքի (Դագօմէյա) ֆրանսիական բերդապահ զօրքը գրաւել է գերմանական Տօգօ քաղաքը անգլիական յածանաւի աջակցութեամբ։

Յուլիսի 25-ի երեկոյեան ֆրանսիական մի զօրամաս մօտեցաւ Ալտկիրխին, որ պաշտպանվում էր երեք ուժեղ դաշտային ամրութիւնով։ Ֆրանսիացիք յարձակման դիմեցին զարմանալի օգևորութեամբ։ Առանձնապէս աչքի ընկաւ հետևակ գունդը, որ արագօրէն գրաւեց խրամատները։ Գերմանացիք փախան թողնելով ֆրանսիացիների ձեռքում բերդերը և մաքրելով քաղաքը։ Դրագունեան գունդը եռանդով հալածեց գերմանացիներին, պատճառելով նրանց լուրջ կորուստներ։ Ֆրանսիացի մի գնդապետ և եօթ օֆիցեր վիրաւորված են։ Գիշերվայ մթութեան պատճառով գերմանացիք խուսափեցին յետագայ դիմադրութիւնից։ Ֆրանսիացիք մտան Ալտկիրխ։ Ազգաբնակութիւնը ցնծութեամբ ընդունեց ֆրանսիացիներին։

Ֆրանսիացիք Միւլհաուզէն մտան երեկ. ժ. 5-ին։ Ազգաբնակութիւնը նրանց օվացիա արաւ։ Ֆրանսիական հեծելազօրը հալածեց նահանջող գերմանական հեծելազօրին։ Ֆրանսիացիների կորուստներն այնքան էլ մեծ չեն. աւելի քիչ են, քան գերմանացիների կորուստները։

Միւլհաուզէնի գրաւումը կունենայ ահագին նշանակութիւն պատերազմական գործողութիւնների համար Էլզասում, ուր գերմանացիների դրութիւնը վատթարանում է։

Զինւորական մինիստրը հեռագրով շնորհաւորեց գեներալիսիմուս Ժոֆֆրին եռանդուն աջող յարձակման համար։

Ֆրանսիական և անգլիական նաւատորմերը Միջերկրական ծովում գտնվելու են ֆրանսիացի ծովակալի հրամանատարութեան ներքոյ, Հիւսիսային ծովում՝ անգլիացի ծովապետի հրամանատարութեան ներքոյ։

Էլզաս մտած ֆրանսիացիք գրաւել են այնպիսի յայտարարութիւններ, որոնք կասկած չեն թողնում, որ Գերմանիան պատերազմը վճռել էր դեռ այն ժամանակ, երբ երրեակ համաձայնութեան պետութիւնները ամեն ջանք գործադրում էին խաղաղութիւնը պահպանելու։

ՑԵՏԻՆԻԷ. — Չեռնոգորցիք գրաւեցին Բուդվուն և Բոկկի Կատարոկը և այնտեղ սահմանեցին իրանց վարչութիւնը։ Ազգաբնակութիւնը յօժարակամ կանգնում է չեռնոգորական դրօշակի տակ։

ԲԵԼԳՐԱԴ. — Յուլիսի 26-ի առաւօտը աւստրիացիք վերսկսեցին ռմբակոծութիւնը, վնասելով մի քանի շինութիւններ։ Թնդանօթաձգութիւնը տևեց երկու ժամ։ Սեմէնդրիայի ռմբակոծութիւնը տևեց յուլիսի 25-ից մինչև երեկոյ։ Վիրաւորված են 4, սպանված 1։

Աւստրիական հետախոյզ գնդերը յուլիսի 25-ին նաւակներով լողում էին Սավայի վրա Զաբրէժի մօտերը։ Սերբ առաջապահ գնդերը թոյլ տուին անցնել նրանց և ափին կրակ բացին։ 4 աւստրիացի վիրաւորված են, մնացածները սպանված են։

ՑԵՏԻՆԻԷ.—Լովչէնի չեռնոգորական զօրքի հրամանատարը տեղեկացրեց աւստրիական Կատարրօյի շրջանի զօրահրամանատարին, շուտով կը սկսվեն պատերազմական գործողութիւններ, և առաջարկեց վեց ժամվայ ընթացքում դուրս հանել զօրքը Կատարրօյից և դրօշակներով նշանակել այն շինութիւնները, որոնք պէտք է խնայվեն։ Չեռնոգորական զօրքը Հերցեգովինայում գրաւել է Կլօբուկ զինանոցը։

ՆԻՇ.—Չեռնոգորական զօրքերը գրաւեցին Սպինչը, Պելտրավինչը և Բուդվու քաղաքը, գրոհ տալով վերցրին Մէտալկոն, Սէնօկօռը և շրջակայ բարձունքները։ Յուլիսի 25-ին հրացանաձգութիւն էր Ուրվիշտայի մօտերը՝ Բօսնիայի սահմանագլխում։

Բելգրադի ռմբակոծութիւնը ծանր թընդանօթներով շարունակվում է։

ՆԻՇ.—Յուլիսի 23-ին աւստրիացիք նահանջեցին դէպի Վիշեգրադ, ուր սկսեցին խրամատներ շինել։ Թշնամին ջրասոյզ արաւ մի շոգենաւ Սավայի նաւահանգստում և 44 անգամ թնդանօթ պարպեց կամուրջի վրա։

ԲԵԼԳՐԱԴ.—Յուլիսի 24-ին, առ. ժամը 10-ից, աւստրիացիք ռմբակոծում են Սեմենդրիան։ Մանրամասնութիւնները յայտնի չեն։ Յետոյ աւստրիացիք փորձեցին ռմբակոծել Զաբրէժը Սավայի վրա, բայց յետ մղվեցին խոշոր կորուստներով։ Հանգստութիւն տիրեց։

ԼՕՆԴՕՆ.—Հաղորդում են, որ բելգիացիք համաձայնել են տարածել զինադադարը միմիայն բերդերի վրա. դաշտային գործողութիւնները շարունակվում են։

Համայնքների պալատում Մակկէնան յայտնեց, որ այն լուրերը, թէ իբր գերմանական 19 ռազմանաւ ջրասոյզ են արված Հօլլանդիայի ափերի մօտ, սխալ են։

Գրաւված է հօլլանդական Լլօյդի «Ինֆանտիա» շոգենաւը, որ Ամստերդամից մեկնել էր Հարաւային Ամերիկայի գերմանացի պահեստի զինուորներով, կէս միլիօն ֆունտի ոսկիով, հացահատիկով և մսով։

Զանազան նաւահանգիստներից տեղեկացնում են, որ գերմանական արագընթաց առևտրական շոգենաւերը վերածված են թեթև յածանաւերի, զինված վեց դիւյմանոց թնդանօթներով, բրիտանական առևտրական նաւերը բռնելու համար։

Լլօյդի տեղեկութիւնների համաձայն, բելգիացիք Անտվերպէնում ձեռք են ձգել 36 գերմանական շոգենաւ։

ԿՈՊԷՆՀԱԳԷՆ.—Լրագիրները հաղորդում են անգլիական «Ամֆիօն» նաւի կորստեան մասին, որի վրա գտնված նաւաստիներից 131-ը զոհվել են, 150-ը՝ ծանր վիրաւորվել են։

ԼՕՆԴՕՆ.—Բրիտանական զօրքերը Աֆրիկայում Ոսկեայ ափին առանց դիմադրութեան գրաւել են Լոմէ նաւահանգիստը գերմանական Տօգօ գաղութում, նաև գրաւել են Հարաւային Տօգօլանդը, ափից 120 կիլօմետր տարածութեամբ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Տեղեկութիւններ են ստացվել, որ աւստրիական իշխանութիւնները Դունայում գրաւել են երկու նաւ ռազմամթերքով։ Բայց յետոյ արձակել են, տեղեկանալով որ ռազմամթերքը ռումինական զօրքի համար է։

ՎԻԼՆԱ.—Յուլիսի 22-ին և 24-ին մեր հետևակ գնդի և թշնամու ընդհարման ժամանակ՝ Վէրժբոլօյի մօտերը՝ մեր զօրքերը կորցրին սպանված և վիրաւոր 60 հոգու. գերմանացիներից սպանվեցին աւելի քան 100 հոգի, վիրաւորների թիւը սպանվածներից էլ շատ է։ Զօրքերի տրամադրութիւնը կռւից յետոյ ամեն գովասանքից վեր է։ Մեր հեծելազօրի ձեռք ձգած մասնաւոր թղթակցութիւնից երևում է, որ գերմանացիները գտնվում են չափազանց ճնշված տրամադրութեան տակ։

ԿՕՎՆՕ.—Լոմժինի սահմանագլխում տեղի են ունենում մասնակի ընդհարումներ մեր հետախոյզ խմբերի և թշնամու միջև։ Մենք վերցրել ենք գերիներ։ Ազգաբնակութեան տրամադրութիւնը ոգևորված է։

ՕԴԵՍՍԱ. — Նաւահանգստում գտնվող աւստրիական «Բարօն Ֆէյերվարի» ապրանքատար նաւը յարգունիս գրաւվեց։

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

27—28 յուլիսի

ԵՐԵՒԱՆ.—Յուլիսի 27-ին ամբողջ Էջմիածինը համաժողովրդական պատարագով աղօթում էր ռուս-զօրքին յաղթութիւն պարգևելու համար։ Տրամադրութիւնը ոգևորված է։ Էջմիածնի պատերում ասում են, որ իբր պատմական երդմանը հաւատարիմ Հայաստանը ուրախութեամբ ուղարկում է իր զաւակներին կռւի Ռուսաստանի՝ մեր երկրորդ հայրենիքի համար։ Հայ ժողովուրդը ոտքի կը կանգնէ ինչպէս մի մարդ և կը տայ իր կարողութիւնը Ռուսաստանի թշնամիների վրա յաղթութիւն տանելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Յուլիսի 27-ին նոր մզկիթում կայացաւ հանդիսաւոր աստուածպաշտութիւն Կայսերական Ընտանիքի առողջութեան և ռուսաց զէնքի աջողութեան համար։ Աստուածպաշտութեանը ներկայ էին Պետերբուրգում բնակվող բոլոր մահմեդականները, նաև պահեստի զինուոր մահմեդականները։ Աղօթելուց յետոյ ներկայ եղողները ուղարկեցին Թագաւոր Կայսրին հաւատարիմ հպատակութեան զգացմունքների հեռագիր։

ԿԻԵՎ.—Կայացաւ Կիևի և Հարաւ-Արևմտեան երկրի չեխերի միութեան բազմամարդ ժողով։ Ժողովը աչքի էր ընկնում զգացմունքների անօրինակ բարձրացումով։ Միաձայն վճռվել է՝ հրաժարվել աւստրիական հպատակութիւնից և խնդրել Նահանգապետին շտապեցնել իրանց ռուսահպատակ ընդունելու գործը, նաև առ ոտս Թագաւորի արկանել իրանց անձնուիրութեան զգացմունքները։ Բազմիցս անգամ երգվեցին ռուսական, չեխական հիմներ և ընդհանուր սլաւօնական «Гей, славяне» երգը։ Ժողովականները կայսր Ալէքսանդր II-ի արձանի վրա պսակ դրին՝ «Ռուսական պանծալի չեխերից» մակագրութեամբ և հանգանակութիւն բացին պահեստիների և վիրաւորների ընտանիքների համար։

ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

27—28 յուլիսի

ԼՕՆԴՕՆ.—Քաղաքագլուխը Պարիզի քաղաքագլխից ստացաւ հետևեալ հեռագիրը. «Այս արքական ժամին, երբ Անգլիան և Ֆրանսիան ոտքի են կանգնել իրաւունքի և քաղաքակրթութեան պաշտպանութեան համար, Պարիզ քաղաքը ուղարկում է իր եղբայրական ողջոյնը Լօնդօն քաղաքին»։

«Դէյլի Տելեգրաֆը» հաղորդում է, որ «Օլիմպիա» ահագին շինութիւնը վերածված է կենտրոնական բանտի՝ կասկածելի գերմանահպատակների համար, որոնցից ձերբակալված են 300 հոգի։ Նրանք գտնվում են զինուորների հսկողութեան տակ։

Զանազան տեղերից տեղեկութիւններ են ստացվում, որ գերմանացի լրտեսները փորձում են վնասել ու քանդել կամուրջներ, երկաթուղու գծեր և հասարակական շէնքեր։ Առ այժմ բոլոր յանցագործները ձերբակալված են։

Կանադայի գեներալ-նահանգապետը հեռագրում է, որ Կանադայի ժողովուրդը Անգլիային առաջարկում է 1 միլիօն տոպրակ ալիւր։ Առաջարկութիւնը ընդունվեց շնորհակալութեամբ։

Լրագիրների տեղեկութիւնների համաձայն, Անգլիան բաւականին ապահովված է ուտեստի պաշարից։

Յուլիսի 25-ի երեկոյեան ահագին ամբոխը ցոյց կազմեց իտալական դեսպանատան առաջ։ Ցուցարարների թւումն էին լորդ Լէնսդօունը և լորդերի պալատի և համայնքների պալատի այլ անդամներ։ Իտալական դեսպանը պատշգամբից զգացված ձայնով շնորհակալութիւն յայտնեց ցուցարարներին։

Ուէլսի պրինցի հիմնած ազգային ֆոնդի համար հանգանակութեան առաջին օրը հաւաքվեց 250,000 ֆունտ ստէրլինգ։

Համայնքների պալատը ընդունեց մի բիլլ, որ իրաւունք է տալիս առևտրի մինիստրին գրաւել բոլոր այն կենսական մթերքները, որ առանց պատճառի թագցնում են առևտրականները։

Կանադայի կառավարութիւնը առաջարկեց Անգլիա ուղարկել 20,000 զինուոր, Աւստրալիան նոյնպէս 20.000, Նոր-Զէլանդիան 8000։ Բոլոր առաջարկութիւններն ընդունվել են շնորհակալութեամբ։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

27—28 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Գեներալ Ռադկօ Դմիտրիևի օրինակը, որ նա թողել է դեսպանութիւնը և մտել ռուսաց զօրքի շարքը, կենդանի արձագանք է գտել Սօֆիայում։ Մեր այնտեղի միսիան բազմաթիւ յայտարարութիւններ է ստանում բօլգարական շատ օֆիցէրներից և պահեստիներից, որոնք ցանկութիւն են յայտնում որպէս կամաւորներ մտնել ռուսաց զօրքի մէջ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Թիւրքիայից հաղորդում են, որ թիւրքական զօրքերի կենտրոնացումը Թրակիայում շարունակվում է։

Արտասահմանից վերադարձաւ Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորօվնա։ Հօլլանդիան վճռել է պահպանել իր չէզոքութիւնը։

ԼՕՆԴՕՆ.—Հաղորդում են Լիսաբոնից, որ պարլամենտը արտակարգ նիստում բանաձև ընդունեց յայտարարութեամբ, թէ Պորտուգալիան, համաձայն նախկին պայմանագրերի, կը կանգնէ Անգլիայի կողմը։ Ռազմանաւերին կարգադրված է պատրաստվել մեկնելու։ Հրաման է տրված զէնքի կանչելու երեք զօրաբանակ։ Անթել հեռագրի գործիքները առևտրական նաւերից հանված են։

Բերլինից յայտնում են, որ յուլիսի 26-ի առաւօտը մեծ ցնծութիւն էր տիրում այն պաշտօնական հաղորդագրութեան պատճառով, թէ Լիէժը անձնատուր է եղել։ Ժողովրդի ամբոխները ողջունում էին զօրքերին։ Կանցլէրը շնորհաւորեց Վիլհէլմ կայսրին։ Լրագիրները յօդուածներով գովաբանեցին զօրքին, որ փայլուն կերպով սկսեց յաղթական պատերազմը։ Լօնդօնում չափազանց ցաւում են, որ Գերմանիայի ազգաբնակութեանը պահում են այդօրինակ անթոյլատրելի մոլորութեան մէջ կանխակալ տարածելով սուտ տեղեկութիւններ։ Գտնում են, որ այդօրինակ գործելակերպը վերին աստիճանի վտանգաւոր կը լինի հեղինակների համար, երբ յայտնվի իրողութիւնը։

ՊԱՐԻԶ.—Պարիզի ազգաբնակութիւնը շարունակում է դէպի դէպքերը վերաբերվել հանգստութեամբ և արժանապատւութեան զգացմունքով։ Բելգիացիների և Ֆրանսիացիների աջողութիւնների տեղեկութիւնները ցնծութիւն են պատճառում։ Քաղաքը պատրաստվում է ընդունել վիրաւորներին։ Լինում են խոշոր նուիրատւութիւններ։ Ֆրանսիացիք միանգամայն քաղաքավարի են վերաբերվում հարկից դրդված Ֆրանսիայում մնացած գերմանացիների և աւստրիացիների հետ։

Ֆրանսիական և բելգիական կառավարութիւնները կարգադրեցին, որպէսզի յուլիսի 27-ից բոլոր այն միջոցները, որ ունի երկու երկրների արդիւնաբերութիւնը, գործադրվեն միասին։ Քարածուխը և հացը կը գործադրվեն միասին։

ՈՒՐՄԻԱ.—Կատարվեց հսկայական ցոյց ի պատիւ ռուս զօրքի։ Քաղաքը զարդարված է դրօշակներով ու գորգերով։

ՆԻՇ.—Գերմանական դեսպանը և միսիայի պաշտօնեաները սերբ կառավարութեան պահանջով մեկնեցին Սերբիայից։

ՆԻՇ.—Բերլինի սերբիական հաւատարմատարին կարգադրված է մեկնել Բերլինից։

ՏՕԿԻՕ.—Լրագիրները գրում են, որ Եապօնիան պէտք է անմիջապէս պատերազմ յայտարարէ Գերմանիային և պաշարէ Կիաօ-Ջաօն, ասելով որ Գերմանիան պէտք է ընդմիշտ զրկվի Կիաօ-Ջաօյից։

ՏՕԿԻՕ.—Կայացաւ «Հէնրօ» արտակարգ խորհրդի և մինիստրների նիստը։ Կայացված է կարևոր վճիռ, նկատի առած դէպքերը Եւրոպայում, ինչպէս նաև Ամերիկայում, որտեղից տեղեկութիւն է ստացված, թէ Ատլանտեան նաւատորմը ուղարկված է չինական ջրերը։

ՏՕԿԻՕ.—Առաջին և երկրորդ եապօնական նաւատորմը ելաւ ծովը ծովակալ Դէվի հրամանատարութեամբ։

ԼՕՆԴՕՆ.—Հռոմից հաղորդում են, որ Վիլհէլմ կայսրը եկել է Աախէն։

ԲՐԻՒՍՍԷԼ.—Ֆրանսիական կառավարութիւնը Լիէժ քաղաքին յատկացրեց պատուաւոր պահակախմբի շքանշան։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ.—Ստօկհօլմի «Պօլիտիկէն» լրագիրը հաղորդում է, որ Բերլինից եկաւ Ստօկհօլմ գերմանական կայսերական սուրհանդակ։

ՑԵՏԻՆԻԷ.—Հրատարակվեց թագաւորական հրովարտակ՝ Աւստրո-Ունգարիային պատերազմ յայտարարելու մասին։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Կ. Պօլսից հեռագրում են, որ Դարդանէլի մօտերը անգլիական ռազմանաւերը աչալրջութեամբ հսկում են, որպէսզի գերմանական ռազմանաւերին թոյլ չը տան անցնել Արշիպելագոս։

◆ Լօնդօնից հեռագրում են, որ գրաւվել են գերմանական գաղութները։

◆ Սերբերը յարձակման են դիմել ամբողջ ռազմագծի վրա։

◆ Վիլհէլմ կայսրը հրաման է արձակել միացնելու Բէլգիան Գերմանիային և գահընկէց անելու բելգիական թագաւորին։

◆ Բօլգարական յայտնի հերոս գեներալ Ռադկօ Դիմիտրեվը արդէն պաշտօն է ստացել ռուսական գործող բանակում։

◆ Գերմանացիք Բրիւգէն են փոխադրել 1000 ռուս խաղաղ քաղաքացիների։

◆ Անգլիական զօրքերը ափ են իջնում Բէլգիայում։

◆ Ֆրանս-անգլիական նաւատորմը փակեց գերմանական նաւատորմին Ադրիատիկ ծովում։

◆ Յունաստանը մեծ թւով զօրքեր է ուղարկում սերբ-բօլգարական սահմանը։

◆ Պեկինից հեռագրում են, որ մի անյայտ մարդ մահափորձ կատարեց պրեզիդէնտ Իւանշիկայի կեանքի դէմ։ Իւանշիկայը թեթև վիրաւորվել է. ոճրագործը ձերբակալված է։

◆ «Нов. Вр.»-ն Մեծ Իշխան Կօնստանտին Կօնստանտինովիչի Ռուսաստան վերադառնալու առիթով գրում է հետևեալը. «Ընտանիքով դուրս գալով Վիլդունգենից, Մեծ Իշխանը ժամանեց Բերլին և այնտեղից գնացքով Էյդկունէն, գրեթէ բացառապէս ռուսների հետ։ Գերմանացիները ճանապարհին իրանց անտանելի էին պահում։ Վագօնում Մեծ Իշխանի մօտ պահակներ էին դրել. նրանցից մէկը դիտմամբ ծխում էր Նորին Բարձրութեան ներկայութեամբ։ Երբ Նորին Բարձրութեան թիկնապահը իր հերթին ծխախոտ հանեց, պահակը կոպտաբար հրամայեց՝ «պահեցէք»։ Իւրաքանչիւր րոպէ գերմանացիները հրամայում էին բարձրացնել և իջեցնել լուսամուտները և քաշել վարագոյրները, նախազգուշացնելով որ՝ ով որ գլուխը հանի լուսամուտից՝ հրացանազարկ կը լինի։ Պահակներից մէկը հրամաններ էր արձակում լեհերէն։ Գիշերը թոյլ չը տուին հանգցնել էլեքտրականութիւնը, նոյնիսկ Նորին Բարձրութեան կուպէում, որ պահակները տեսնեն, թէ ինչ է կատարվում այնտեղ։ Գումբինէնի կայարանում գերմանական լէյտենանտը յայտնեց, որ էլ հեռուն գնալ չի կարելի, վտանգաւոր է, երբ թէ ռուսները պէտք է հրացան արձակեն, չը նայած որ գնացքը գնում էր սպիտակ դրօշակի տակ։ Դիմել Վիլհէլմ կայսրին Նորին Բարձրութիւնը իր արժանապատւութիւնից ստոր համարեց։ Բանակցութիւններից յետոյ գերմանացիները առաջարկեցին Նորին Բարձրութեանը ընտանիքով աւտոմօբիլի վրա տանել մինչև սահմանը, բայց նախ քան սահմանը հասնելը՝ 10 վերստի վրա յայտնեցին, որ հեռու գնալ վտանգաւոր է, և առաջարկեցին ոտքով գնալ։ Սրված առարկութեանը լէյտէնանտը կոպտաբար հրամայեց՝ «Heraus»։ Գնացին ոտքով և սահմանի մօտ հանդիպեցին ռուսական առաջապահ խմբերի, որոնք Նորին Բարձրութեանը տարան մինչև սահմանը»։

◆ Կ. Պօլսից չէ մեկնում գերմանական զինուորական միսիան, չը նայած պատերազմին։ Ընդհակառակն միսիան ամենալուրջ ուշադրութեամբ ամրացնում է Բօսֆորի ափերը։ Աշխատանքները կատարում են գերմանական բանւորները գերմանացի ինժեներների հսկողութեամբ։

◆ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ V Էջմիածնից շրջաբերականներով հրամայել է բոլոր հայ թեմերին կատարել եկեղեցիներում մաղթանք ռուսաց զօրքին յաղթութիւն պարգևելու համար։

◆ Բագւի Հայոց Կուլտ. Միութեան նախագահ Ն. Գ. Ալիբէգեան միջնորդութիւն է յարուցել քաղաքապետի առաջ, որ թոյլ տրվի Կուլտուրական Միութեանը Բագւում լայն օգնութիւն կազմակերպել պահեստիների ընտանիքներին, որպիսի նպատակի համար թոյլ տալ հանգանակութիւն բանալ—դրամներով, իրերով և ուտեստի մթերքներով—պահեստիների ընտանիքներին օգնելու համար։ Բացի այդ, Կուլտուրական Միութիւնը զբաղվելու է սպիտակեղէն պատրաստելու և հիւանդանոց կազմակերպելու իր սեփական տանը՝ պատերազմի դաշտում վիրաւորվածների համար։ Ինչպէս հաղորդում են, քաղաքապետը խիստ համակրանքով է վերաբերվել այս միջնորդութեանը։

◆ Սերբերը ձերբակալել են աւստրիական մի օֆիցէր, որը կազմակերպել է Սարաեվօյի սպանութիւնը։

◆ Լիէժից հեռագրում են, որ ականներ դրված խճուղով անցնելու ժամանակ, ականների պայթումից կործանվեց գերմանական մի գումարտակ։

◆ Ռուսաստանը մերժել է Միացեալ Պետութիւնների նախագահ Վիլսօնի միջնորդութիւնը։

◆ Բերլինում բանւորական անկարգութիւններ են տեղի ունենում։ Բանւորները հակառակ պատերազմի ցոյցեր են անում և «կորչի պատերազմը, կորչի խելագար կայսրը» աղաղակներով շրջում են փողոցները։

◆ Լիբկնեխտի գնդակահարութիւնը առաջ բերեց խիստ կատաղութիւն։ Կայսրի պալատի առաջ ցուցարարների և ոստիկանութեան միջև ընդհարում եղաւ։ Կան բազմաթիւ վնասվածներ։

◆ Մօսկվայում հեռագիր է ստացված, որ Հիւսիսային ծովում ծովային ահեղ ճակատամարտ է մղվում։ Անգլօ-ֆրանսիական նաւատորմը սուզել է գերմանական 14 նաւ։

◆ Պետերբուրգի էլեքտրաքարշի այն ծառայողների կանայք, որոնք զէնքի են կանչված, խնդրում են իրանց ընդունել իրանց մարդկանց տեղ։ Քաղաքում խօսում են, որ հնարաւոր է այդ միջնորդութիւնը բաւարարութիւն ստանայ։

ՄԱՄՈՒԼԻ ԿԱՐԾԻՔԸ

«Бирж. Вѣд.»-ն գրում է. «Ամբարտաւան մարտահրաւէրը մենք ընդունեցինք հանգստութեամբ։ Մենք պէտք է կռւենք, յոյս դնելով ամենից առաջ Աստուծոյ ողորմածութեան վրա, մեր սեփական ուժերի և ռուս ժողովրդի ոգու անխորտակելի արիութեան վրա։ Անցած մի քանի օրը անօրինակ ապացոյցներ տուին Ռուսաստանի սերտ միաբանութեան մասին։ Այժմ, երբ արդէն պատերազմը սկսվել է, երբ թշնամին արդէն մերկացրել է իր սուրը, մենք հաւատում ենք, որ Ռուսաստանը մինչև վերջը կը կատարէ իր պարտքը։ Թշնամու հանդէպ ողջ Ռուսաստանը Վլադիվօստօկից մինչև Վիսլա, Սառուցեալ Ովկիանոսից մինչև Կովկասի լեռներն ու հովիտները կը միանան մի ընդհանուր ոգևորութեամբ, մի կարող զգացմունքով, մի ընդհանուր յոյսով, թէ Աստուած չի թողնի Ռուսաստանին։ Իսկ աղօթքից յետոյ՝ աներկիւղ առաջ!»։

*

«Рус. Вѣд.»-ն գրում է.

«Ռուսաստանը պատերազմ չէր որոնում և նրան չէր ձգտում։ Հակառակ իր կամքի նա խառնվեց արիւնալի ընդհարման։

«Այն գիտակցութիւնը, որ Ռուսաստանը ոչ միայն մեղաւոր չէ եւրոպական ծագած հրդեհի մէջ, այլ որ նա ամեն կերպ ձգտում էր դրա առաջն առնել, որ վերջին օրերի անցքերում նա կանգնած էր իրաւունքի և կուլտուրայի կողմը և որ այժմ գործը յարձակված թշնամու դէմ հայրենիքը պաշտպանելուն է վերաբերում,—այս գիտակցութիւնը ստեղծում է բարոյական մեծ ուժ, որը բոլոր ռուսներին, առանց սկզբունքների տարբերութեան, կը միացնի մի հզօր ամբողջութեան մէջ։ Ռուսաստանը արիութեամբ ընդառաջում է գալիք օրվան, և մեզանից իւրաքանչիւրը կը կատարէ իր պարտքը»։

*

«Н.Вр.»-ն դեռ յուլիսի 20-ին հետևեալն է գրել «Պատերազմից առաջ» խորագիրը կրող իր մի յօդուածում.

«Գերմանական ցեղերի գրոհը սլաւօնական ցեղերի վրա կատարվեց։ Գերմանական կայսրութիւնը պատերազմ յայտարարեց Ռուսական կայսրութեան։ Հսկան կանգնեց հսկայի դէմ։ Մեր թիկունքին ամբողջ սլաւօնականութիւնն է, որին մենք պաշտպանում ենք մեր կրծքով։ Պրուսիան իր ետևից տանում է բոլոր գերմանացիներին, և տանում է քարուքանդ անելու ոչ միայն Ռուսաստանին, այլ և ամբողջ սլաւօնականութիւնը։ Այդ հասարակ պատերազմ չէ, ոչ էլ քաղաքական։ Այդ՝ երկու աշխարհների կռիւ է իրար միջև։

«Թող կորչի փոքրոգութիւնը մեր միջից։ Այժմ մի միտք կայ. միանալու, ամրանալու, դիմադրելու թշնամուն ապառաժի նման։ Ամենքս լինենք մի մարդու նման, ինչպէս 1812 թ. պատերազմում։ Այս երկրորդ «հայրենական պատերազմն» է, այս մեր հայրենիքի հիմունքների պաշտպանութիւնն է։

«Գերմանիան պատերազմ յայտարարելով Ռուսաստանին միևնոյն ժեստը արաւ, ինչպէս արաւ Աւստրիան Սերբիայի վերաբերութեամբ։ Ի՞նչ է նշանակում այդ։ Չէր կամենում, արդեօք, ցոյց տալ Գերմանիան դրանով, թէ ինքը նայում է Ռուսաստանի վրա և յարգում է Ռուսաստանին ոչ աւելի ոչ պակաս, քան Աւստրիան՝ մի բուռն սլաւօն ժողովրդին։ Մերձաւոր շաբաթներն ու ամիսները ցոյց կը տան, թէ այնպէս է, իրօք, ամենայաղթ գերմանացին, ինչպէս ինքը իրան է երևակայում։

«Արիացիր, ռուս ժողովուրդ։ Մեծ ժամին դու կանգնած ես կուրծքդ դէմ արած բռնավանդակ սլաւօն ժողովուրդների համար, տանջված, ճնշված ու մասամբ տեւտոնական արշաւից երկրի երեսից վերացված սլաւօնների համար։ Եթէ բացվի այժմ «ռուսական պատուարը», գերմանական ջրերը կը ջնջեն, կը մաքրեն նորերս միայն ռուսական արիւնով ազատագրված Բալկանեան թերակղզու ժողովուրդներին։

«Թող Տէրը օրհնէ մեր Կայսրին և մեր Հայրենիքը նրա մեծ ու ճշմարիտ գործում»։

ԲՕԼԳԱՐԻԱՅԻ ԴԵՐԸ

Այս օրերս հեռագիրը Սօֆիայից մի սենսացիօն տեղեկութիւն բերեց։

Գէշօվի օրգան «Միրը» յայտնում է, որ Բօլգարիայի այժմեան դերը պէտք է կայանայ չէզոքութիւն պահպանելու մէջ, բայց որում այդ չէզոքութեան համար նա իրաւունք ունի պահանջել վարձահատուցումն այս կամ այն կողմից։

Այդպիսի քաղաքականութիւնը կարող է բաւականին «շտկել անցեալը» և դրան է սպասում Սօֆիայի կառավարութիւնից բօլգար ժողովուրդը։

Թարգմանելով այդ տեղեկութիւնը աւելի հասկանալի լեզուով, Բօլգարիան այնքան էլ չի քաշվի դաւաճանելու սլաւօնականութեան և միացնել իր վիճակը Աւստրո-Ունգարիայի, աշխարհի սլաւօնականութեան այդ չարանենգ թշնամու հետ։ Սակայն, օգտվելով իր հարևանի դժուարութիւններից և հաւատարիմ Գէննադիևի, Ռադօսլավօվի քաղաքականութեանը, նա գերադասում է շահել օտարի հաշւին, չը դիմելով բացարձակ բռնութեան։

Կօմպէնսացիա, վարձահատուցումն չէզոքութեան համար,—ահա թէ ինչ է խորհուրդ տալիս բօլգար կառավարութեան Գէշօվի «ռուսասէր» օրգանը։

Ամենից առաջ հարց է ծագում, թէ ինչ կերպ, իրերի ներկայ դրութեան մէջ, Բօլգարիան կարող է յարվել բացարձակօրէն Աւստրո-Ունգարիային կամ թէ մնալ բացէ ի բաց չէզոք։

Չէ որ Սօֆիայում առ հասարակ, իսկ Գէշօվին՝ մասնաւորապէս պէտք է քաջ յայտնի լինի, որ պատերազմի դէպքում, եթէ Բօլգարիան խախտէ իր չէզոքութիւնը յօգուտ Աւստրո-Ունգարիայի, նա իսկոյն դէմ առ դէմ կերևայ յոյն-ռումինական կօալիցիային, որի դէմ կռւելը Բօլգարիայի համար ներկայանում է ուժերից վեր։

Այստեղից պէտք է մի եզրակացութիւն անել. բօլգարական չէզոքութիւնը հանդիսանում է ճարահատեալ, իսկ այդպիսի չէզոքութեան համար յոյս դնել որևէ կօմպենսացիայի վրա, առ նուազն տարօրինակ է։

Միակ ուղին, որ ներկայանում է Բօլգարիայի համար, որպէսզի, ինչպէս ասում է Գէշօվի օրգանը, «շտկել անցեալը», կայանում է ոչ թէ արիւնալի կռւի մատնված ցեղակից սլաւօն ժողովրդից ցինիկաբար կօմպենսացիա պահանջելում, այլ նրանում, որպէսզի ձեռք մեկնէ սերբերին այն փորձանքների րոպէին, որոնք բաժին են ընկել հանուր սլաւօն աշխարհին։

Այդ դէպքում կօմպենսացիան ինքնին առաջ է գալիս, և միայն այդ ժամանակ բօլգարները իրաւունք ունեն յուսալ նրան։

Բօլգարիայի հանդէպ այժմ երկու ճանապարհ կայ. կամ նորէն մտնել սլաւօն ժողովուրդների ընտանիքի մէջ, կամ վերջնականապէս հրաժարվել սլաւօն պետութեան դերից, խայտառակելով իրան դէպի Աւստրո-Ունգարիան բարեացակամօրէն ձգտելով՝ սլաւօնական Սերբիայի դէմ ուղղված նրա աւազակային արշաւանքի մէջ։

Ռադօսլավօվի և Գէննադիևի հասարակական դաւաճանութիւններին ամենքն արդէն սովորել են։ Բայց դատելով «Միրի» յօդուածից, Գէշօվի վրա, որին ցայսօր համարում էին իսկական սլաւօն, ինչ որ խաւարում է ընկել...

Մենք սովոր չենք տեսնել այդ պետական գործչին չարչու դերում։ Այդ տեսակ դերը նրան սազ չէ գալիս. թող այդ «փէշակը» նա թողնի Գէննադիևին։

Իսկ յանձին նրա մենք կը կամենայինք տեսնել դարձեալ անկեղծ սլաւօն գործչի։

Բօլգարիայի ապագան ամբողջովին զոդված է Ռուսաստանի հետ միանալու մէջ, և այն Ռուսաստանի, որ ստեղծեց Բօլգարիային, ինչպէս նաև Մերձաւոր Արևելքի միացած պետութիւնների հետ միութիւն կայացնելու մէջ։ («Б. В.»)

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

—o—

ՅՈՒԼԻՍԻ 26-Ի ՆԻՍՏԸ

Պետերբուրգ, 26 յուլիսի

Արտաքին գործերի մինիստրի ճառը

Ամբիոն է բարձրանում արտաքին գործերի մինիստրը, որին անվերջ ծափահարում են բոլոր աթոռներից։

«Պետ. Դումայի պարոնայք անդամներ. Պատասխանատու վճիռների դժուարին րոպէներին կառավարութիւնը ույժ է քաղել, գիտակցելով որ իր հետ միանգամայն համախոհ է ժողովրդական խղճմտանքը (բացականչութիւններ «բրաւօ՛» բոլոր աթոռներում)։ Երբ ժամանակը գայ պատմութեան համար իր անկողմնապահ դատաստանը անելու, նրա վճիռը, ես հաստատ հաւատում եմ դրան, այն կը լինի, որով մենք ղեկավարվում ենք։ Ռուսաստանը չէր կարող խուսափել իր թշնամիների յանդուգն մարտակոչից։ Նա չէր կարող հրաժարվել իր պատմութեան լաւագոյն պատգամներից։ Նա չէր կարող դադարել Մեծն Ռուսաստանը լինելուց («բրաւօ՛», բուռն ծափահարութիւն բոլոր աթոռներում)։ Մեր թշնամիները ձգտում են մեզ վրա բարդել պատասխանատւութիւնը այն աղէտների համար, որոնց մէջ նետեցին նրանք ամբողջ Եւրոպային, սակայն նրանց սուտ ամբաստանութիւնները չեն կարող մոլորեցնել ոչ ոքի, ով բարեխղճաբար հետևում է Ռուսաստանի վերջին տարիների քաղաքականութեանը։ Ռուսաստանը երեկվանից չէ տուել իր անկեղծ խաղաղասիրութեան բազմաթիւ ապացոյցները, և շնորհիւ միայն այդ խաղաղասիրութեան Եւրոպայում խափանվեց այն հրդեհը, որ այն է պէտք է բռնկվէր, երբ 1912—13 թ. թ. կռիւ ծագեց Բալկաններում։ Ռուսական քաղաքականութեան մէջ սպառնալիք եւրոպական խաղաղութեանը չը կար։ Իր արժանապատւութիւնը մեծ Ռուսաստանը բնաւ ու երբէք չէ տեսել զինաշարժութեան մէջ, օտարի ինքնայիրութիւնը ոտնահարելու մէջ, բարեկամութեան իրաւունքներն արհամարհելու մէջ («բրաւօ՛», ծափահարութիւն)։ Ռուսաստանի հանգիստ, խաղաղ հզօրութիւնը հանգիստ չէր տալիս նրա թշնամիներին։ Հարկաւոր է, արդեօք, յիշեցնել ձեզ, թէ ինչպէս Աւստրօ-Ունգարիան ամեն փորձ կատարում էր նուաղեցնելու Ռուսաստանի պատմական դրութիւնը Բալկաններում։ Հասել է ժամը, երբ ես կարող եմ ասել այս ամբիոնից, որ նրա ջանքերով աջողվեց եղբայրասպան պատերազմ սերմանել Բոլգարիայի և նրա դաշնակիցների միջև (դահլիճում շարժում)։ Սակայն ծանր փորձանքների ենթարկված Բալկանեան թերակղզու ուղղափառ ժողովուրդների միութեան գործը, Աստուած կը տայ, չի կորչի։

«Դուք գիտէք պատերազմի առիթը։ Դուք գիտէք, թէ ինչպիսի պայմաններում Աւստրօ-Ունգարիան ուլտիմատում ներկայացրեց մեր հաւատակից Սերբիային։ Եթէ Սերբիան ընդունէր այդ պայմանները, նա կը դառնար Աւստրօ-Ունգարիայի վասալը։ Պարզ էր, որ մեզ համար գործին չը խառնվելը կը նշանակէր ոչ միայն հրաժարվել Ռուսաստանի դարաւոր դերից՝ իբրև բալկանեան ժողովուրդների պաշտպանի, այլև ընդունել, որ Աւստրիայի և նրա ետևում կանգնած Գերմանիայի կամքը Եւրոպայի համար օրէնք է («բրաւօ՛», ընդհանուր ծափահարութիւն)։ Դրան չէինք կարող համաձայնել ոչ մենք, ոչ Ֆրանսիան, ոչ էլ Անգլիան։ Գերմանիան կարող էր, եթէ յիրաւի կամենում էր խաղաղութիւն, իր մի խօսքով կանգնեցնել իր դաշնակցին, ինչպէս նա կարող եղաւ իր մի իշխանական խօսքով այդ անել բալկանեան ճգնաժամի օրերում (բացականչութիւններ՝ «ճիշդ է»)։ Մինչդեռ Գերմանիան մերժեց մէկը միւսի ետևից իրան ուղղված առաջարկութիւնները և իր կողմից հանդէս եկաւ դատարկ հաւաստիացումներով։ Ժամանակը անցնում էր, և բանակցութիւններն առաջ չէին գնում։ Աւստրիան ենթարկեց Բելգրադը կատաղի ռմբակոծման։ Այդ՝ կառավարութիւնից կազմակերպված ջարդ էր, Սարաեւի անպաշտպան սերբ ժողովրդի ջարդերի բնական շարունակութիւնը յուլիսի 15-ի յայտնի օրից յետոյ։ Այդ ամենի պարզ նպատակն էր ժամանակ վաստակել բանակցութիւններով և գնել մեզ և Եւրոպային Սերբիայի ստորացման կատարված փաստի դիմաց։ Այդօրինակ պայմաններում մենք չէինք կարող ձեռք չառնել նախազգուշացման բնական միջոցներ, ես ասել՝ որ Աւստրիան արդէն զէնքի էր կանչել իր զօրքի կէսը։

«Երբ Ռուսաստանում յայտարարվեց զօրքի ու նաւատորմի զօրահաւաք, Թագաւոր Կայսրին հաճելի եղաւ Իր Արքայական խօսքով վստահեցնել գերմանական կայսրին, թէ Ռուսաստանը չի ձեռնարկի ոչ մի գործողութեան, քանի կայ յոյս բանակցութիւնների խաղաղ ելքի նկատմամբ։ Այդ ձայնը լսելի չեղաւ։ Գերմանիան պատերազմ յայտարարեց սկզբում մեզ, յետոյ մեր դաշնակցին։ Այլ ես չը կարողանալով զսպել ինքն իրան, նա միայնակ սկսեց ոտնահարել այն պետութիւնների հանրայայտ իրաւունքները, որոնց չէզոքութիւնն ապահովված է հանդիսաւորապէս նրա իսկ ստորագրութեամբ ի շարս այլ պետութիւնների (բացականչութիւն բոլոր աթոռներում՝ «ամօ՛թ»)։ Չի կարելի չը խոնարհվել բելգիական ժողովրդի հերոսութեան առաջ, այն մի բուռն ժողովրդի, որ կռիւ է մղում ահագին գերմանական զօրքի դէմ (բուռն ծափահարութիւն բոլոր աթոռներում. պատգամաւորները կանգնում են և խանդավառութեամբ ողջունում են դիւանագիտական օթեակում գտնվող բելգիական ներկայացուցչին)։

«Գերմանիայի գործելակերպը չէր կարող առաջ չը բերել համայն քաղաքակիրթ աշխարհի խորին զայրոյթը և ամենից առաջ վեհազանց Ֆրանսիայի, որ մեզ հետ միասին ոտքի կանգնեց ի պաշտպանութիւն ոտնահարված իրաւունքի ու արդարութեան (ծափահարութիւններ պայթում բոլոր աթոռներում, բացականչութիւններ՝ «կեցցէ Ֆրանսիան». Դումայի անդամները ելնում են տեղերից և օվացիա են անում ֆրանսիական դեսպանին)։ Հարկ կա՞յ, արդեօք, ասելու, որ միևնոյն զգացմունքները համակեցին Անգլիային, որ, ինչպէս մի մարդ, միացաւ Գերմանիային ներհակելու անհրաժեշտութեան ընդհանուր զգացմունքով և վերջ դնելու Գերմանիայի հեգեմոնիային (բուռն ծափահարութիւն բոլոր աթոռներում. պատգամաւորները ոտքի ելած ողջունում են մեծ-բրիտանական դեսպանին)։

«Գերմանիայից յետոյ մեզ պատերազմ յայտարարեց Աւստրիան, պատճառաբանելով իր վճիռը նրանով, որ մենք միջամտեցինք նրա վէճին ընդդէմ Սերբիայի, նաև նրանով, որ մենք թշնամական գործողութիւններ սկսեցինք Գերմանիայի դէմ։

«Մենք կռւում ենք մեր հայրենիքի, մեր արժանապատւութեան ու մեծ պետութեան դիրքի համար («բրաւօ՛»). Գերմանիայի և նրա դաշնակցի տիրապետութիւնը Եւրոպայում մենք չենք կարող թոյլ տալ («բրաւօ՛»)։ Մեզ համակարծիք են այդ խնդրում նաև մեր դաշնակիցները։ Աստուած այս անգամ ևս չի թողնի մեր հայրենիքը, որ ամբողջովին բռնվել է իր Ցարի շուրջը սիրոյ ու անձնուիրութեան ընդհանուր զգացմունքով (բուռն ծափահարութիւն)։ Յուսալով առ Աստուած, անդրդուելի հաւատով առ Ռուսաստանը, կառավարութիւնը բուռն վստահութեամբ դիմում է ձեզ, ժողովրդական ներկայացուցիչներիդ, համոզված՝ որ յանձին ձեր արտացոլում է մեր մեծ հայրենիքի պատկերը, որի վրա չեն յանդգնի ծիծաղել մեր թշնամիները»։

Մինիստրի վերջին խօսքերը ընդունվում են բուռն ծափերով։ Դումայի անդամները արտաքին գործերի մինիստրին օվացիա են սարքում, որ տևում է մի քանի րոպէ։

Ֆինանսների մինիստրի ճառը

«Պետ. Դումայի պարոնայք անդամներ. պատերազմ վարելու համար պետութիւնը զինւորական զօրահաւաքի հետ միասին պէտք է ֆինանսներն էլ ի մի հաւաքի, և ֆինանսների մինիստրութեան վրա պարտականութիւն է ընկնում ամենից առաջ հոգ տանել գանձարանային միջոցների մասին, որոնք կարող են ներկայացվել ինչպէս պատերազմական կարիքների համար, այնպէս և առևտրին ու արդիւնաբերութեանը աջակցելու համար, միաժամանակ պահպանելով ոսկին։ Այդ նպատակով, պատերազմ յայտարարելուց անմիջապէս յետոյ, ֆինանսների կոմիտէին մի առաջադրութիւն ներկայացվեց այն մասին, որ պետական բանկը դադարեցնի թղթադրամները ոսկով փոխարինելը և որպէսզի բանկին լայն իրաւունք տրվի նորից բաց թողնել թղթադրամներ։ Բացի դրանից, որպէսզի նրան իրաւունք տրվի զեղչել պետական գանձարանի կարճ-ժամանակեայ պարտաթղթերը։ Այդ առաջադրութիւնը, ֆինանսների կոմիտէի հաւանութիւնը գտնելուց յետոյ, ներկայացվեց մինիստրների խորհրդին, այնտեղ ևս ենթարկվեց քննութեան և նոյնպէս ընդունվեց։ Մինիստրների խորհրդի որոշումը սոյն յուլիսի 23-ին արժանացաւ Բարձրագոյն վաւերացման։ Գանձարկղային միջոցների ներկայացման անհրաժեշտութիւնը առևտրի և արդիւնաբերութեան կարիքների համար այժմ, այս ծանր ժամանակ, հանդիսանում է առանձնակի հրամայողական։ Անհրաժեշտ է, որպէսզի երկրի նորմալ կեանքը ըստ հնարաւորութեան չը տուժէ, որպէսզի չը լինի և ոչ մի սարսափ, այլ լինի լիակատար հաւատ ու հանգստութիւն ազգաբնակութեան և առևտրա-արդիւնաբերական դասակարգերի մէջ, որոնք կարող են յոյս դնել պետական բանկի, ֆինանսների մինիստրութեան և կառավարութեան օգնութեան վրա։ Հարկ է պարզել, որ եթէ պետ. բանկը կամենում է օգտվել այն իրաւունքից, որպիսին տրվում է նրան այժմ նոր օրինագծով, նա կարող է բաց թողնել $1^1/_2$ միլիարդի թղթադրամներ, որոնք, սակայն, չեն ապահովվում ոսկով։ Ընդունելով որ այժմ ոսկու պաշար պետ. բանկում կայ մի միլիարդ 700 միլ. րուբլու, մենք տեսնում ենք, որ ոսկին $1^1/_2$ անգամ աւելի կը լինի թղթադրամներից։ Ֆինանսների մինիստրութեան վրա պարտականութիւն է ընկնում նաև աղբիւրներ որոնել պատերազմը վարելու համար։ Ամենից առաջ, պատերազմական ծախքերի համար տրված էր եղած բոլոր գումարը, որը պատերազմի սկզբներին կազմում էր 500 միլ. րուբլի։ Ընդ սմին, կառավարութիւնը անհրաժեշտ գտաւ վերաքննել բոլոր մինիստրութիւնների նախահաշիւները, հնարաւոր կրճատումներ անել նրանցում և բոլոր տնտեսածը յատկացնել պատերազմական ֆոնդին։ Այս հարցում կառավարութիւնը խնդրում է ձեր լիազօրութիւնը։ Նախահաշւային կրճատումները կարող են տալ ոչ պակաս, քան 250 միլ. րուբլի։

«Այսպիսով հէնց պատերազմի սկզբից մենք ազատ միջոցներ ունենք 500 միլիոնի և 250 միլիոն ր. տնտեսութիւն, ուրեմն միասին 750 միլիոն րուբլի (ծափահարութիւններ. «Բրաւօ՛»)։ Ինքն ըստ ինքեան պարզ է, որ ապագայում պէտք է դիմենք փոխառութեան. բայց փոխառութեան պայմանները կախված են փողի շուկայի դրութիւնից։ Ահա ինչու համար հարկաւոր է թոյլատրել պետական բանկին զեղչել պետական գանձատան կարճաժամանակեայ պարտաթղթերը։ Դա կը լինի գանձատան կարճաժամանակեայ պարտքը պետական բանկին, որը կը ծածկվի ապագայ փոխառութեամբ։ Այդ միջոցին մենք դիմեցինք և ռուսօ-ճապոնական պատերազմի ժամանակ։ Այն ժամանակ բաց էին թողված 400 միլիօն րուբլու կարճաժամանակեայ պարտաթղթեր, որոնք շատ շուտով ծածկվեցին։ Վերջապէս չը պէտք է մոռանալ, որ հարկաւոր է տուրքերը բարձրացնել։ Պէտք է նկատել, որ պատերազմի ծախքերի մի փոքր մասը միշտ ծածկվում է տուրքերի աղբիւրներից։ Այդպէս էր Ֆրանսիայում 1870 թւականին, Անգլիայում անգլօ-բօէրական պատերազմի ժամանակ և վերջին ռուս-ճապոնական պատերազմին։ Մեր պետութիւնը պարտք համարեց ներկայացնել ձեր հաւանութեանը գինու և ծխախոտի գների բարձրացումը։ Որովհետև գինին և ծխախոտը չեն հանդիսանում իբրև անհրաժեշտ պիտոյքներ (ձայներ՝ «ճիշդ է»), գինու գնի բարձրացումը կը պակասեցնի նրա գործածութեան չափը (ձայներ՝ «ճիշդ է»), և այդ կարևոր միջոցը չը պէտք է այժմ աչքաթող անել, մանաւանդ ներկայ պատերազմական ծանր դրութեան ժամանակ, երբ հարկաւոր է ամեն կերպ ամրապնդել ժողովրդի առողջը, աշխատելու ընդունակութիւնը և դիմացկունութիւնը (ձայներ՝ «բրաւօ՛»). Թոյլ տուէք ձեր հաւանութեանը ներկայացնել և գարեջրի ակցիզի աւելացումը։ Այդ բոլորից պետութիւնը տարեկան կը ստանայ մօտ 200 միլիօն րուբլի։ Թոյլ տուէք նոյնպէս հաղորդել ձեզ և այն միջոցների մասին, որոնց դիմեց մինիստրութիւնը սկսած յուլիսի 11-ից, այսինքն երբ Աւստրիան պատերազմ յայտարարեց Սերբիային, ֆինանսական մինիստրութեան պաշտօնեաները անմիջապէս մեկնեցին Բեռլին, որ այնտեղից յետ վերցնեն մեր մեծ քանակութեամբ այնտեղ եղած տոկոսաբեր թղթերը (ծափ., «բրաւօ՛»)։ Այդ թղթերի արժէքը մօտ 20 միլ. րուբլի է և նրանք բերվեցին Պետերբուրգ։ Մի խօսքով, երբ պատերազմ յայտարարվեց, Բեռլինում մեր գանձարանի փողից շատ չը կար, բացի մի քանի փոքրաքանակ գումարներից, որոնք հարկաւոր էին եղած փոխառութիւնների տոկոսները վճարելու համար։

«Թոյլ տուէք ձեր ուշադրութիւնը հրաւիրել մի լուրջ խնդրի վրա։ Ես խօսում եմ պահեստների ընտանիքների ապահովութեան մասին. երբ ընտանիքը կերակրողը գնում է պատերազմ, պետութիւնը պարտաւոր է նրա ընտանիքը ապահովել, և այդ մենք կանենք ամենքիս միահամուռ ջանքերով» (ծափ., «բրաւօ՛»)։

Կերենսկին կարդում է աշխատաւորականների յայտարարութիւնը. «Հաւատալով, որ ռուսական դեմօկրատիան միացած միւս բոլոր ույժերի հետ, յետ կը մղի մեզ վրա յարձակվող թշնամուն և կը պաշտպանի իր մայրենի երկիրն ու կուլտուրան, որը ստեղծվել է նրա քրտինքով ու սերունդների արիւնով, աշխատաւորականները յուսով են, որ պատերազմի դաշտում, մեծ տանջանքների բովում կամրապնդվի Ռուսաստանի բոլոր ազգերի եղբայրութիւնը, կը ստեղծվի մի կամք և երկիրը կազատվի ներքին կապանքներից։ Նոյնպէս հաւատալով, որ բոլոր աշխատաւոր դասակարգերը բոլոր երկիրների մի են, մենք եղբայրական ողջոյն ուղարկում ենք նրանց, որոնք բողոքեցին պետութիւնների եղբայրասպան կռւի դէմ։ Գիւղացիներ, բանւորներ և բոլորդ, ով այս դժւար րոպէներին Ռուսաստանին երջանկութիւն է ցանկանում, արիացէք, ժողովեցէք ձեր բոլոր ույժերը և պաշտպանելով երկիրը՝ ազատեցէք նրան։ Իսկ ձեզ, մեր եղբայրներ, որ ձեր արիւնը թափում էք հայրենիքի համար, խոնարհ և եղբայրական ողջոյն»։ (Ընդհանուր ծափահարութիւններ)։

Խաուստով սօցիալ-դեմօկրատների անունից կարդում է մի յայտարարութիւն, որ երկիրների սօցիալիստական խմբերը իրանց մէջ կը գտնեն բաւականին ույժ, որ ներկայ պատերազմը վերջը լինի միլիտարիստական և կապիտալիստական կարգերի։ (Ծափեր սօց.-դեմօկրատների աթոռներում)։

Բարոն Ֆելկերզամը յայտարարում է, որ Պրիբալտիկ երկրի գերմանական հաւատարիմ ազգաբնակութիւնը պատրաստ է միշտ պաշտպան կանգնել գահին և հայրենիքին։ Դրա համար այդ երկրի ներկայացուցիչները ոչ միայն իրանց ձայնը կը տան պատերազմական ծախքերի համար, այլ և իրանց նախորդների օրինակով պատրաստ են իրանց կեանքը զոհել Ռուսաստանի մեծութեան համար։

Այնուհետև պատգամաւոր Նարոնսկին խօսում է լատիշների և էստոնների կողմից և ընդգծում է նրանց միահամուռ պատրաստակամութիւնը՝ պաշտպան կանգնել մեծն Ռուսաստանին։

Ոչաս յիշեցնում է, որ լիտովական ժողովրդի ճակատագիրը միշտ կապված է եղել սլաւոնների ճակատագրի հետ, և այժմ լիտովական ժողովուրդը, որի երկրի վրա ընկան առաջին գնդակները, գնում է պատերազմ՝ իբրև մի սրբազան արշաւանքի։ Լիտովցիները, մոռանալով իրանց կրած բոլոր վիրաւորանքները, յուսով են տեսնել Ռուսաստանը ազատ, և որ այս պատերազմից յետոյ նրանք կը միանան ողջ Ռուսաստանի հետ (ծափ., «Բրաւօ՛»)։

Ֆրիդման խօսում է հրէայ ժողովրդի կողմից և նրա պատրաստակամութիւնն է յայտնում պաշտպան կանգնել Ռուսաստանին։

Լիւցը խօսում է ռուսահպատակ գերմանացիների կողմից, ասելով որ չը նայած գերմանական պետութիւնը նայում է նրանց վրա իբրև իր առաջաբերդի, բայց նրանք հաւատարիմ են ռուսաց Կայսրին և կը կարողանան արժանապատւութեամբ պաշտպանել իրանց այժմեան մեծ հայրենիքի պատիւը։

Այնուհետև խօսում են Բալաշօվ, Մուսին-Պուշկին և Մարկօվ 2-րդ։

Միլիւկով կադետների կողմից յոյս է յայտնում, որ Ռուսաստանը ծանր փորձութիւններից անցնելով՝ կը մօտենայ իր ցանկալի նպատակին։ Մեր առջև կանգնած է մի մեծ և ահեղ խնդիր, որ իր լուծմանն է սպասում։ Մենք պէտք է միահամուռ կերպով ազատվենք արտաքին թշնամուց, որ իր աշխարհակալական ձգտումներով կամենում է մեզ հրել իր ճանապարհից։ Մեր գործը արդար գործ է։ Մենք կռւում ենք մեր երկիրը օտարի արշաւանքից և գերմանական մշտապէս գերակշռող ճնշումից ազատելու համար (ծափահարութիւններ)։ Այդ կռւում մենք բոլորս միացած ենք։ Մենք ոչ մի պայման չենք դնում, մենք ուղղակի ցանկանում ենք յաղթահարել բռնաւորներին (ծափահարութիւններ)։

Այնուհետև խօսում է Գօղնեվ Կազանի նահանգի Թուրքերի և չերեմիսների կողմից։

Միաձայն ընդունվում է հետևեալ բանաձևը. «Լսելով պետութեան բացատրութիւնները և գոհունակութեան զգացումներով համոզվելով, որ խաղաղութիւնը պաշտպանելու համար Ռուսաստանի կողմից գործ են դրված բոլոր հարկ եղած միջոցները, համապատասխան նրա արժանապատւութեան, Դուման հաւատում է, որ Ռուսաստանի բոլոր ազգերը, միացած միահամուռ սիրով դէպի հայրենիքը, իրանց Թագաւորի ձայնից պատրաստ են ելնել հայրենիքի, պատուի և գոյքի պաշտպանութեան։ Այդ գիտակցութեան տակ՝ Պետ. Դուման հաւատում է Ռուսաստանի անխորտակելի ույժին և նրա փառաւոր ապագային։ Անցնելով հերթական խնդիրներին և պատրաստակամութիւն յայտնելով՝ աջակցել երկրի պաշտպանութեան և պահեստների ընտանիքների ապահովութեան, Դուման իր եղբայրական ողջոյնն է առաքում Ռուսաստանի փառապանծ պաշտպաններին, որ անձնուիրաբար կատարում են իրանց պարտքը»։

Նիստի դահլիճը թնդում է ծափահարութիւններով և հիմնի երգեցողութեամբ։

Նախագահը հրաւիրում է լսել Բարձրագոյն հետևեալ հրամանը Դումայի պարապմունքների դադարեցման մասին.

Պետ. Հիմնական Օրէնքների 99-րդ յօդ. հիման վրա հրամայում ենք Պետական Դումայի զբաղմունքները դադարեցնել սոյն թւականի յուլիսի 26-ից և վերսկսելու ժամանակը նշանակել ոչ ուշ, քան 1-ն փետրվարի 1915 թւի, արտակարգ հանգամանքներին նայած։ Կառավարիչ սենատը չի յապաղի պատշաճ կարգադրութիւնն անելու։

Իսկականի վրա նորին Կայսերական Մեծութեան ձեռքով ստորագրված է՝

«ՆԻԿՈԼԱՅ»

Պետերհօֆ, 24 յուլիսի 1914 թ.

Նախագահը բացագանչում է. «Թագաւոր Կայսրին «ուռա՛»։

«Ուրա» աղաղակները և ժողովրդական հիմնի երգեցողութիւնը թնդացնում են նիստի դահլիճը։

Նիստը փակվում է։ Պետական Դումայի անդամները երկարատև ծափահարութիւններով ուղեկցում են Րօձեանկօյին։

(Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—o—

ՄԻ ՓՈՔՐԻԿ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ*)

III

Էջմիածնի տաճարի վերանորոգութեան շուրջը ծագած վէճը

Մեր ընթերցողներին յայտնի է, որ Էջմիածնի մայր տաճարը վերանորոգվում է և վերանորոգութեան ծախքը տուել է հանգուցեալ Ալ. Մանթաշեանը։ Այդ վերանորոգութեան գործը ամենայն զգուշութեամբ առաջ տանելու համար, որպէսզի մայր տաճարի ճարտարապետական ձևը որևէ փոփոխութիւն չը կրէ, կազմվել են երկու յանձնաժողովներ՝ մինը Թիֆլիսում, բաղկացած հայ, ռուս ճարտարապետներից և նկարիչներից, միւսը Էջմիածնում, բաղկացած սինօդի անդամներից և այլ եկեղեցականներից։ Վերջինս պաշտօն ունի միայն հսկել Թիֆլիսի ճարտարապետների որոշումների գործադրութեան վրա և վարում է վերանորոգութեան ֆինանսական մասը։ Արդ՝ յայտնի է, որ այս տարվայ սկզբին, Մոսկվայում տեղի ունեցած մի գրական-գեղարուեստական հաւաքոյթի մէջ քննութեան առարկայ էր դարձել այդ վերանորոգութեան խնդիրը, և Մոսկվայի հայերի մի խումբ, որոնց մէջ և հայ նկարիչ Սարեանը, հիմնվելով մի քանի տեղեկութիւնների վրա, ստացած Էջմիածնից և Թիֆլիսի ճարտարապետների յանձնաժողովի անդամների մէկից, բողոքի ձայն բարձրացրեց, թէ վերանորոգութեան ժամանակ տեղի է ունենում վանդալիզմ, թէ տգէտ վարպետները տաշում և ոչնչացնում են արձանագրութիւններ, քանդակներ և այլն։ Այս ենթադրութիւնը աւելի հաստատվեց, երբ Էջմիածնի միաբաններից մինը, Բարդուղիմէոս եպիսկոպոս Ծուղուրեան, հանդէս եկաւ «Հովիտի» մէջ, յայտարարելով որ արդարև արձանագրութիւններ և քանդակներ ոչնչացվել են, երբ վարպետները տաշում էին քարերը կամ գմբէթի և տանիքի ներկը ու վերցնում ծեփը։

Իր ժամանակին «Մշակի» մէջ տպվեցին յօդուածներ այդ վէճի մասին, և վերջին յօդուածը եղաւ Թիֆլիսի յանձնաժողովի անդամ նկարիչ Գ. Բաշինջաղեանի յօդուածը, որ, հիմնվելով յանձնաժողովի արձանագրութիւնների և այլ փաստերի վրա, միանգամայն հերքում էր տարածված լուրերի և մեղադրանքների ճշգութիւնը։ Սակայն Բարդուղիմէոս եպիսկոպոսը շարունակում էր մնալ իր մեղադրանքի վրա։ Մոսկվայի խումբն ևս դեռ չէր կամենում հաւատալ, որ վանդալիզմ տեղի չէ ունեցել, ուստի և յանձնել էր իր անդամներից երկուսին՝ նկարիչ Սարեանին և Գէորգեանին՝ անձամբ գնալ Էջմիածին և ստուգել իրողութիւնը։ Արդեօք ինչ եզրակացութեան եկան պ. պ. Սարեանը և Գէորգեանը, այցելելով Էջմիածինը և վերահասու լինելով վերանորոգութեան գործին, մեզ դեռ յայտնի չէ։ Ուստի ես իմ տեսածս կը հաղորդեմ ընթերցողներին։

Յուլիսի 5-ին, երբ դոկտ. Տաղաւարեանը, ես և որդիս՝ Սուրէնը հասանք Էջմիածին, այդտեղ եկան և Թիֆլիսի յանձնաժողովի ճարտարապետներից 6 հոգի՝ հայ և ռուս։ Օգտվելով նրանց ներկայութիւնից, երբ նրանք բարձրացան մայր տաճարի կտուրը և զանգակատունը, ուր կատարվում էր վերանորոգութիւնը, ես էլ բարձրացայ նրանց հետ և խնդրեցի ցոյց տալ ինձ բոլոր այն քարերը, որոնք տաշվել են կամ որոնց հանվելով և կոտրվելով նրանց տեղ նորերն են դրված, և առ հասարակ ամբողջ վերանորոգութեան գործը, և բացատրել այն սիստեմը, որով տարվում է այդ գործը։

Ես ամենայն ուշադրութեամբ դիտեցի, քննեցի բոլոր կատարված գործը, տեսայ, թէ ինչպէս են վարպետները քերել կարմիր ներկը, քանդել ծեփը, ինչպէս են հանել խոնաւութիւնից կամ այլ պատճառներից փչացած քարերը և դրել նրանց տեղը նորերը. տեսայ այն հիանալի քանդակները, պատկերները, որոնք երևան են եկել ներկի և ծեփի քերելուց յետոյ և որոնք այնքան մեծ փայլ են տալիս մանաւանդ զանգակատան ճարտարապետական ոճին, կառուցված Փիլիպպոս կաթողիկոսի և Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսի ձեռքով։ Եւ ոչ մի տեղ չերևաց, որ որևէ արձանագրութիւն կամ քանդակ փչացած լինի տաշելուց կամ քերելուց։ Հետևաբար՝ պէտք է ընդունել, որ ծագած երկիւղները և զրոյցները վանդալիզմի մասին արդիւնք են լոկ թիւրիմացութեան։

Պէտք է ասել, որ վերանորոգութիւնը այնքան առաջ է գնացել, որ այժմ Էջմիածնի մայր տաճարը խիստ. հմայիչ տեսք է ընդունել, մինչ առաջ նա սաստիկ անհաճոյ տպաւորութիւն էր թողնում իր կարմրաներկ տանիքով և զանգակատնով։

Վերանորոգութիւնը առ այժմ կատարվում է արտաքինի վերաբերմամբ. Ներսի վերանորոգութեան հարցը դեռ մնում է առկախ, մանաւանդ Գէորգ IV կաթողիկոսի օրով շինված թանգարանի վերացման հարցը։ Ճարտարապետներն այն կարծիքի են միաբերան, որ այդ կարկատան կամ կցորդ թանգարանը, որ շինվել է 1868—1869 թ. և ոչ մի կապ չունի տաճարի ճարտարապետական սիստեմի հետ, պէտք է քանդել, որպէսզի տաճարը ստանայ իր նախկին համաչափութիւնը, բայց Գէորգ V Կաթողիկոսը, հասկանալի փափկանկատութեամբ, չէ կամենում քանդել այն, ինչ որ կառուցել է իր նախորդ Գէորգ IV-ը։

Ուրեմն վէճը վանդալիզմի մասին պէտք է փակված համարել և վերանորոգութեան յանձնաժողովի գործունէութիւնը պէտք է համարել կանօնաւոր և արդիւնաւոր։

Հ. Առաքելեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Լուրեր Սղնախից

Սղնախ, 21 յուլիսի

Սղնախի գաւառի զանազան գիւղերում գոյութիւն ունեն գր.-ընթերցարաններ, որոնք աջողութեամբ տանում են գործը։ Այժմ մի նոր ձրի գր.-ընթերցարան վճռւված է բանալ Բոզքէ գիւղում, որտեղ բնակվում են մօտ 500 տուն վրացիներ։ Նորերս այս հարցի մասին գիւղում կայացաւ ժողով, որտեղ գրադարանի հարցը վճռվեց դրականապէս։ Գիւղի ուսուցիչը յանձն առաւ պատշաճաւոր միջնորդութիւն յարուցել կառավարութեան առաջ։ Ժողովուրդը գոհ մնաց այս վճռից։

---

*) Տես «Մշակ» №№ 143 և 158.

Նորերս Շիքլիանի գիւղում կայծակը գիշերով խփեց տաւարի նախիրին. 4 եզ մեռան. նախրապանները բարեբաղդաբար ազատվեցին։

Ամառանոց եկողների թիւը շատ է։ Երեկոները բուլվարը լիքն է լինում զբօսնողներով. պատահում են և կռիւներ։ Մի գիշեր մեծ ղալմաղալ սարքեց ուսանող երիտասարդութիւնը։ N. N.

—

Կեանքը Կարսում

Կարս, 26 յուլիսի

Հացաբոյսերը փարթամ դրութեան մէջ սպասում են երիտասարդ հնձւորների, բայց աշխատող ձեռքի խիստ պակասութիւն է զգացվում։

Վաճառականները կամաց-կամաց բարձրացնում էին ապրանքների գները, բայց Նահանգապետը իր խիստ և արդարացի նկատողութեամբ չափաւորեց ագահ մարդկանց վնասակար ձգտումները և յայտարարութիւն կպցրեց պատերին, որ ոչ ոք չը համարձակվի նշանակված գներից աւելիով ծախելու։

Ամսիս 24-ին քաղ. այգում ամբիոն բարձրացան երկու վաղվռուն պատանիներ 17—18 տարեկան, ճառեր արտասանեցին մէկը հայերէն, միւսը ռուսերէն։ Ճառերը տևեցին առ առաւելն 3 րոպէ։ Կարճ և ազդու։ Այդ պատանի ճառախօսները հրաւիրում էին քաղաքացիներին գնալ գիւղացիներին օգնել, արտերը հնձել։ Բարի ցանկութիւն և գեղեցիկ առաջարկութիւն է։ Բայց ցաւալի է, որ այդպիսի հարցերի համար ամբիոն են բարձրանում երեխաները, այլ ոչ ծնողները։ Որովհետև ճառախօսները դեռ հասարակութեան մէջ անյայտ պատանիներ էին, այդ պատճառով ծիծաղ առաջ բերեց և կարծեմ առանց հետևանքի պիտի մնայ։ Ո՞ր քաղաքացին իր փայլուն կօշիկները կը հանի, հովանոցը վայր կը դնի, սառը լիմոնադի տեղ տաք ջուր կը խմի և կը գնայ գիւղ՝ արտ հնձելու։

Այս ձևը անիրագործելի է։ Ամենանպատակայարմարն է գնել քանի հատ հնձող և կալսող մեքենաներ և բաժանել գիւղերում։ Մեծ գումար հարկաւոր չէ. ընդամենը 6000 ր.։ Կարսի ազգաբնակութեան համար մի չնչին գումար է։ Պէտք է մարդասիրաբար ձեռք մեկնել այս ճգնաժամին ձեռքը ծոցը մնացած երկրագործին, որ տալիս է մեզ քաղաքացիներիս կենսական բոլոր պիտոյքները։ Ս. Տէր-Մելքիսեդեկեան

—

Օվացիաներ գաւառում

Հին-Նախիջևան, 25 յուլիսի

Այսօր մեր քաղաքը տօնական կերպարանք էր ստացել. առաւօտվանից անընդհատ սկսեցին ղօղանջել հայոց և ռուսաց եկեղեցիների զանգերը անսովոր ույժով։ Ս. Գէորգ եկեղեցում սկսվեց հանդիսաւոր պատարագ։ Եկեղեցին լի էր երկսեռ աղօթողներով։ Պատարագը վերջանալուց յետոյ ողջ հայ համայնքը, առանց սեռի ու հասակի խտրութեան, սրբազան ոգևորութեամբ լցված՝ Աստուածածնի պատկերը ձեռքերի վրա, Թագաւոր Կայսրի նկարը առաջից, դրօշակներով, խաչ ու խաչվառով շարժվեց դէպի ռուսաց եկեղեցու հրապարակը. այստեղ միացաւ և ռուսաց հանդէս-թափօրը. ապա գաւառապետը բարձր արտասանութեամբ կարդաց պատերազմի հրովարտակը, որից երևաց, որ Գերմանիան ու ապա Աւստրիան պատերազմ են յայտարարում Ռուսաստանին, իսկ Ռուսաստանը իր բոլոր հաւատարիմ հպատակներով ընդունում է այդ պատերազմը և կը պաշտպանէ իր պատիւը, արժանապատւութիւնը։ Օդը թնդաց ցնծագին ուռաներով։ Այդ պահին եկան թուրքերը իրանց մօլլաներով հանդերձ, նոյնպէս Թագաւորի պատկերը բարձրացրած ձեռքերի վրա. ապա տեղի ունեցան ռուսաց և հայոց կողմից հանդիսաւոր մաղթանքներ և խօսվեցին աւուր պատշաճի ճառեր։ Գնալով ստուարանում էր մասնակցողների թիւը. սկսվեցին ցոյցերը. երգվում էին հիմներ. ուռաներին, օվացիաներին վերջ չէր լինում։ Զինուորականներին, գաւառապետին ձեռքերի վրա բարձրացնում էին օդի մէջ։ Շուտով վրա հասաւ նաև ասիական դափ ու զուռնան ու ներդաշնակեց մուզիկային, որ բաւական աջող ածում էին քաղ. ուսումնարանի աշակերտները. այդտեղից թափօրը շարժվեց դէպի ոստիկանատուն. փողոցները ծայրէ ի ծայր բռնվել էին շարժուն երկսեռ հանդիսականներով. ոստիկանատան առաջ կրկնվեցին ցոյցերը աւելի եռանդուն թափով։ Տեղնուտեղը մօտ 70-ի չափ հայ կամաւորներ առաջացան և յայտնեցին գաւառապետին, որ ցանկանում են մասնակցել պատերազմին ու սուր ի ձեռին պաշտպանել ընդհանուր հայրենիքի պատիւն ու փառքը, և ընդունվեցին դրանք։ Այստեղից թափօրը դիմեց զօրանոց, ուր նոյնպէս զօրքերի գնդապետին, զինուորներին օվացիաներ սարքեց։

Ա. Տ.-Ստեփանոսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԹԻՖԼԻՍ

◆ Վրաց նահանգական ազնուականութեան պարագլուխ իշխ. Գ. Ն. Աբխազի Թագաւոր Կայսրից ստացել է հետևեալ հեռագիրը.

Անկեղծ շնորհակալ եմ վրաց հաւատարիմ ազնուականութեան պատրաստակամութեան համար՝ պապերի և հայրերի օրինակով արիւն թափել մեր մեծ Հայրենիքի պատւի և արժանապատւութեան համար։ ՆԻԿՈԼԱՅ

Այս ամենաողորմած հեռագիրը ստացվել է ի պատասխան վրաց ազնուականութեան Նորին Կայսերական Մեծութեան ուղղած այս հեռագրին. «Պետերհօֆ։ Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրին։ Ձեր Կայսերական Մեծութեան մեծ պետութեան ծայրերում վրաց ազնուականութիւնը հաստատ և հաւատարիմ հպատակութեամբ ծառայում է Ռուսական Պետութեան Բարձրագոյն Հրամայողներին։ Եւ այժմ անխախտեսելի գալիք փորձութիւնների օրերին, մեր որդիքը, որ բաղդաւոր և հպարտ են ծառայել սիրելի Միապետին և մեծ հայրենիքին, գնում են թշնամու վրա պատմական սրբազան աւանդով՝ մահ կամ յաղթութիւն։ Ամենաողորմած Թագաւոր, Սիօնի հին տաճարում լուռ աղօթքներ վերառաքվեցին Բարձրեալին Ձեր Թագաւորական աջին և համառուսական փառապանծ զօրքին յաղթութիւն շնորհելու համար։ Վրաց ազնուականութիւնը առ ոտս Ձերդ Կայսերական Մեծութեան Գահի արկանում է անսահման անձնուիրութեան և սիրոյ զգացումները։ Թող Տէրը յաւիտեան լոյսով լուսազարդէ ռուսական հողի պսակակիր Ղեկավարի փառքը»։

◆ Յուլիսի 28-ին փոխարքային ներկայացաւ Վրաստանի և Իմերէթի թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը։

◆ Ամսիս 28-ին Վրաստանի էկզարխ Պիտիրիմ արքեպիսկոպոսը այցելեց փոխարքայի երկու օգնականներին, նահանգապետին և ուրիշ պաշտօնական անձանց։

◆ Յուլիսի 27-ին հռոմէական-կաթոլիկական Ուսպէնսկի եկեղեցում մեծ բազմութեան ներկայութեամբ մաղթանք կատարվեց Նորին Կայսերական Մեծութեան արեշատութեան և ռուսաց զէնքին յաղթութիւն շնորհելու համար։

◆ Քաղ. վարչութիւնը նախընթաց օրը որոշեց զէնքի կանչված քաղաքային ծառայողների պաշտօնները պահել և՛ չընդհատել հաշիւները և իւրաքանչիւր հինգամեակին ռոճիկները աւելացնելը, որոշվեց նոյնպէս՝ զէնքի կանչվածների ընտանիքներին, որոնց առաջուց բնակարաններ էին յատկացված, թոյլ տալ օգտվելու, տալ նրանց նպաստ այս ձևով. ամսական 100 ր. ստացողին՝ կէս ամսվայ ռոճիկ, իսկ 100 ր. աւելի ստացողին՝ նոյնպէս կէս ամսվայ ռոճիկ. իսկ զօրաբանակ մտած ծառայողների այն ընտանիքներին, որոնց թիւը երկուսից աւելի է, տալ ռոճիկի 75%-ը, իսկ երեխայ չունեցող ծառայողների կանանց, մայրերին, ծերունի հայրերին, եթէ նրանք գտնվել են զէնքի կանչված ծառայողի հովանաւորութեան տակ, տալ ռոճիկի 50%-ը։

◆ Քաղ. վարչութիւնը որոշել է յուլիսի 31-ին դումայի արտակարգ ժողով գումարել գործադիր յանձնաժողով գումարելու ուպրավայի ծառայողների, որոնք զէնքի են կանչվել, ռոճիկների հարցը քննելու համար և քաղաքի 1914 թւի ծախսի նախահաշիւը կրճատելու։

◆ Դատաստանական պալատի դատախազ Ն. Մ. Սմիրնով վերադարձաւ իր պաշտօնական ճանապարհորդութիւնից՝ Հիւսիսային Կովկասից։

◆ Արձակուրդից վերադարձաւ փոխարքայի խորհրդի անդամ Ն. Ֆ. Զուևկովսկի և ստանձնեց իր պարտականութիւնները։

◆ Թիֆլիսի վերջին օրերի սոսկալի շոգը փոքր ինչ մեղմացաւ յուլիսի 28-ի երեկոյեան եկած թեթև անձրևով, որից յետոյ օդը զովացաւ։

◆ Թիֆլիսի պօստ-հեռագրական շրջանի կառավարիչը խնդրում է մեզ տպել, որ մինչև 30 գրամ ծանրութիւն ունեցող հասարակ նամակները, արքունական սահմանված ձևի պօստային տոմսերը, որոնք հասցէագրված կը լինեն գործող զօրաբանակի անունով կամ այնտեղից պետութեան հասցէով, թոյլատրվում է առաքել ձրի։

ՄԱՄՈՒԼ

Մենք յաճախ առիթ ենք ունեցել այս լրագրի էջերում արձանագրելու այն տխուր փաստը, որ «Դաշնակցութիւն» կուսակցութիւնը թշնամական դիրք է բռնել Հայկական Բարեգործ. Ընդհ. Միութեան դէմ և ամեն տեղ աշխատել է խոչընդոտներ յարուցանել նրա գործունէութեան դէմ։ «Դաշնակցութեան» այդ թշնամութիւնը առաջ է եկել, անշուշտ, այն հանգամանքից, որ Միութեան կանոնադրութեան զօրութեամբ յեղափոխական և քաղաքական կուսակցութիւններին պատկանող անձինք չեն կարող աթոռ ունենալ Միութեան ոչ կենտրոնական և ոչ էլ տեղական վարչութիւնների մէջ, այլ կարող են լինել սոսկ անդամ Միութեան։ Արդ, դաշնակցականները, ըստ իրանց սովորութեան, ցանկանում են ամեն տեղ տիրապետող հանդիսանալ և տնօրինող։ Եւ որովհետև Միութիւնը դրամական ահագին միջոցներ ունի և այդ միջոցները գործ են դրվում այնպիսի նպատակների վրա, որոնցից Դաշնակցութիւնը ոչ մի շահ իր համար չէ կարողանում քաղել, ուստի և նա՝ մի ժամանակ բոլորովին յայտնաբար, իսկ այսօր միայն գաղտնաբար, խուլ պայքար է մղում Միութեան դէմ։ Դաշնակցութեան լիդէրներից մէկը մինչև անգամ թոյլ էր տուել երկու տարի առաջ Ֆրեզնօյում հրապարակօրէն յայտարարել, թէ «Միութիւնը մեզ հետ չէ գործում, բայց Դաշնակցութիւնը կը կարողանայ ջնջել նրան և տիրանալ նրա գանձերին»։

Վերջերս հայկական հարցի հետևանքով, երբ Դաշնակցութիւնը կեղծ թէ անկեղծ սկսեց համակրութիւն ցոյց տալ Պօղոս-փաշայի գործունէութեան, դաշնակցական թերթերը դադարեցրին իրանց յարձակումները Միութեան դէմ և սկսեցին քարոզել համերաշխութիւն բոլոր կուսակցութիւնների միջև։ Սակայն այդ համերաշխութիւնը շուտով խախտվեց, որովհետև դաշնակցականները աշխատեցին ամեն տեղ այդ համերաշխութիւնը միայն յօգուտ իրանց շահեցնել։ Միաժամանակ «Յուսաբեր» թերթը, որի ղեկավարներն են Ա. Մեօթէմէտեան և Ս. Պարթևեան—որոնք եթէ դաշնակցականներ չեն, բայց յարել են այդ կուսակցութեան և նրա փողն են հնչեցնում—սկսեց մի պայքար անուղղակի կերպով Միութեան դէմ, բարդելով Նուպար-փաշայի մտերիմ գործակիցների վրա «Միութեան» գործում (Ագաթօն պէյ, Մ. Անդրանիկեան, Վ. Մալէզեան) զանազան ամբաստանութիւններ։ Ահա այդ պայքարի էութիւնը բացատրել է Զմիւռնիայի «Դաշինք» թերթը, որ իր № 1461-ի մէջ մի երկար յօդուած է տպել, որից և քաղուածօրէն առաջ ենք բերում մի քանի հատուածներ.

> Ամեն հայու ծանօթ է, որ հայկական խնդրոյն ոյժ տալու համար, Ն. վ. Պօղոս փաշան Վեհ. Կաթողիկոսէ իբրև լիազօր ներկայացուցիչ որոշուելէ և պաշտօնին սկսելէ առաջ խուլ պայքար մը սկսած էր Հայկ. Բար. Ընկ. Միութեան դէմ ծանօթ խմբակցութեան կամ կուսակցութեան մը կողմէ։ Երբ Պօղոս Նուպար փաշա Եւրոպայի մէջ գործի սկսաւ, այդ պայքարը յանկարծ դադրեցաւ համերաշխութեան մը կեղծ ու պատիր ծեքծեքումներու տակ, բոլորովին տարբեր նպատակներով։ Եգիպտոսի մէջ միջկուսակցական և չէզոք տարրերէ մարմին մը կազմուեցաւ այն յոյսով, որ կուսակցական որոշ կարգեր պիտի յաջողէին իրենց ըմբռնած համերաշխութեան ծրագիրն ընդունել տալ չէզոք անուանուած տարրերու, որոնց շարքին մէջ կը գտնուէին մեր վերև յիշատակած կարգ մը ականաւոր անձերը։
>
> Բարեբաղդաբար ընդհանուր հայութեան համար այդ ծրագրուած համերաշխութեան այն էջն, որ պատրաստուած էր կարգ մը կուսակցականներէ, չկրցաւ հաւանութեան արժանանալ, ուսկից յառաջ եկաւ դժնդակ յուսախաբութեան մը հետ խուլ վայրոյթ մը։ Ի՞նչ ընէին այդ համերաշխութեան կեղծ առաքեալներն և անոնց միամտօրէն գործիք դարձող կարգ մը անսկզբունք անձերը։
>
> Ահա այս տեղէն կը սկսի պայքար մը ստեղծելու անհրաժեշտութեան սուր պարագան։
>
> Ուղղակի և մէկէն ի մէկ յարձակումը սկսիլ Հ. Բ. Ը. Միութեան դէմ՝ շատ տգեղ և վրան բաց մարտահրաւէր մը պիտի նշանակէր հասարակութեան աչքին և հիմէն պիտի տապալէր հետապնդուած նշանակէտը. ուրեմն տարբեր գետին մը գտնելու էր, տարբեր հող մը՝ սքօղելու համար երևոյթները, խաբելու համար ժողովուրդը և ճշմարտանման ցոյց տալու համար մղուած պայքարն՝ ազգասիրական անշահախնդրութեամբ մը համեմուած։
>
> Յարձակումը կողմնակի գործելու էր, յուսալով բերդը ներսէն գրաւել։ Հետևապէս լաւագոյն ռազմագիտութեան պահանջներուն համեմատ յարձակելու էր իրենց գաղափարներուն և ծրագիրներուն ընդդիմացողներուն ազգային գետնի վրայ մատի փաթթոց ընելով Եղեանի կտակը և կլլեցնելու աշխատելով եգիպտահայ ժողովրդեան մասնաւորապէս և անկէ դուրս գտնուող հայութեան ընդհանրապէս, թէ ազգային գործոց մատակարարութեան յանձնառումն կատարող անձերն, որոնք միևնոյն ժամանակ Պօղոս փաշա Նուպարի վստահութիւնն ալ կը գրաւեն, գեղծարար, շողամարար, պնակալէզ, հացկատակ մարդիկ են և ազգին դրամները կը խորեն։

Իսկ մի այլ №-ի մէջ (№ 1481) նա գրում է հետևեալը.

> Ծանօթ է անցեալ «Յուսաբեր»-ի Պարթևեան-Մեօթէմէտեան աղտոտ պայքարը, որ յանկարծ բրտօրէն ուղղուեցաւ գաւառական երեսփ. ժողովին և խումբ մը ականաւոր անձնաւորութեանց դէմ, որոնց բարեկամութիւնը շահելու համար քիչ քծնած չէին այդ պարոնները, մանաւանդ Պարթևեան, որ անոնց քիչ մը ծայրայեղ ազնուութեան միայն կը պարտէր իր Կահիրէի գոյութիւնը իմմիբեան ծանօթ գայթակղութեանէն վերջ։ Պայքարը ի մասնաւորի ուղղուած էր տիար Մ. Անդրանիկեանի դէմ, որ համերաշխութեան միջկուսակցային ֆօնդին հանգանակութեան (?) գանձապետի պաշտօնը չընդունելով՝ կիրքերը գրգռելու մեղքը գործեց... Բայց «Յուսաբեր» այս պայքարը մղելու մէջ երկու նպատակ ունէր։ Գաւառական ժողովը լուծել ժողովրդային ամբոխավարութեամբ, որպէս զի քանի մը տիրահաշակներ գործերն ու դրամները յաջողին ձեռք անցնել և Հ. Բ. Ը. Միութիւնը անուանարկել, որպէս զի չյաջողի իր յառաջիկայ հանգանակութեանց մէջ, բարենորոգումներու գործադրութեան առթիւ կրթական և տնտեսական նպատակներու համար։
>
> Այդ վիճակին մէջ էր, երբ գործը տարօրինակ երևոյթ մը ստացաւ։ Մէկ կողմէն կը լսենք ստոյգ կերպով, թէ Պոլսոյ Հ. Յ. Դաշնակցութեան պետերը սաստկօրէն պախարակեր են իրենց Կահիրէի բարեկամներուն այս աղտոտ պայքարը, որ մինչև իսկ վսեմ. Պօղոս փաշա Նուպարի դէմ ծանր ակնարկութեանց մղած էր զիրենք, փաշան ալ վարկաբեկելու համար, քանի որ նախատուած «քլիքին» նախագահն է Նորին վսեմութիւնը, և հրահանգ տուած են անմիջապէս դադրեցնել այս անտեղի պայքարը իբրև ազգավնաս։

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ.

ՂԱԶՎԻՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԿՊԱՌԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌԸ

—

Ղազվին, 8 յուլիսի

Պարսից շահերը ֆարմաններով Ղազվինի Բաղի-Շահ կոչված քաղաքամասում մի փոքր կալուածք էին նուիրել տեղիս հայ համայնքին։ Եւ որովհետև այդ ֆարմանների մէջ ճշգիւ տեղը չէր որոշված, այդ պատճառով էլ հայերը մօտաւորապէս մի տեղ որոշում են և առուներ են փորել տալիս։

Մի առ ժամանակ անցնելուց յետոյ, յայտնվում է որ այն տեղը, որը հայերը վերցրել են, պատկանում է Նասր-իւլ-Մուլքին՝ իր ամբողջ շրջապատով—մօտ 30,000 արշին—և նոյնիսկ այդ հողը ունի իր համար սեփական ջուր, որի թոմարը 90 տարվայ թւական ունի։ Նասր-իւլ-Մուլքը որպէս սեփականատէր այդ հողամասի՝ հայերին այդ տեղից դուրս է քշում և տիրում հողը։

Մի առ ժամանակ անցնելուց յետոյ եղբ. Բարխուդարեանները Նասր-իւլ-Մուլքից գնում են վերոյիշեալ կալուածքը։ Հայերը, տեսնելով այդ բանը, նորից հարց են բարձրացնում, և խնդիրը հասնում է Թէհրանի ռուսաց դեսպանատան (եղբ. Բարխուդարեանները ռուսահպատակներ են)։

Ռուսաց դեսպանատունը Բարխուդարեաններից խստիւ պահանջում է։ Յեշեանները իրանց կալուածագիրը տանում-ներկայացնում են դեսպանատանը և հարկաւոր բացատրութիւնները տալիս, և դեսպանատունը արդար է ճանաչում նրանց, իսկ մեղադրվողները ձեռնունայն վերադառնում են։

Երբ Խ. վարդապետը գալիս է անցնելու արտասահման, հայերը հաւաքվում են և եղբ. Բարխուդարեանների դէմ նորից գանգատվում են։ Հայր սուրբը, խնդիրը քննելուց յետոյ, գալիս է այն եզրակացութեան, որ Բարխուդարեանները արդար են։ Բայց նրա յորդորանքով՝ յեշեանները այդ կալուածքից 3000 արշին նուիրաբերում են եկեղեցու և դպրոցի համար (այժմ դպրոցը շինված է). այդպիսով այդ խնդիրը ընդ միշտ փակված է համարվում։

Ա. Ս. Թումբեան

Խմբագիր-հրատարակիչ՝

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Պուկին, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. Ներքին ջղային և երեխայոց հիւանդութ.։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—10—12 ժ. ականջի, կոկորդի, քթի հիւանդութ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հիւ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երկշ. հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
Յ. Յ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ—12—1 ժ. երկուշ. չորեքշ. ուրբաթ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Յ. Յ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—69

Լոյս տեսաւ
Բ. ԻՇԽԱՆԵԱՆԻ
„ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊՐՈԲԼԵՄԸ“
(Քննադատական վերլուծութիւն) գրքոյկը, եր. 97, գինը 20 կոպ.։
Դիմել «Գուտենբերգ» և «Կենտրոնական» գրավաճառներին և «Մշակի» խմբագրութեան։ Բագու՝ «Сегаль» գրախանութին։ Նոյն տեղերը վաճառվում են հեղինակի միւս երկերը։ (օ. Ժ.) 716. 10—7

Վլադիկավկազի հայոց երկսեռ դպրոցի համար հարկաւոր են ԱՒԱԳ ՈՒՍՈՒՑԻՉ, ԽԸՄԲԱՊԵՏ, որը դպրոցում ունենալու է այլ դասեր ևս, և ՈՒՍՈՒՑԻՉ-ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆԵՐ բոլոր առարկաներից։ Աւագութեան համար 100 ր., իսկ դասերի համար՝ 30-ական ռուբլի դասագին։ Միւս աշխատանքները չեն վարձատրվում։ Դիմել՝ Владикавказъ, Армянское Церковно-Приходское Попечительство. (ա.օ.) 739. 4—2

Առևտրի և Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՍԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայլեան պր. 24/4. Տելեֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։
Գործնական զբաղմունքները կատարվում են կուրսերում՝ Լոնդոնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են բուն կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն), արագագրութիւն. բ.) ոչ-պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) Սղագրութիւն. 3) Դակտիլոգրաֆիա ([illegible] և ուր.) և 4) Առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և դաս-դաս։ Ունկնդիրների թւի շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաքաղաքացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշւապահներ, օգնականներ և առևտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 334 ունկնդիր, որոնցից 67 հոգի իգական սեռից)։
Կուրսերի հիմնադիր՝ Տ. ՓԻԼՕՍԵԱՆ
(օ. մ.) 720. 0—5

ՍՐՏԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ,
ճարպակալումը, սրտի սկլէրօզը, սրտի բաբախումը եւ թանչոցը, նէվրաստէնիան եւ ջղային հիւանդութիւնները, սեռական թուլութիւնը, զառամութիւնը, հիւծւածութիւնն ու նիհարութիւնը մեծ աջողութեամբ բժշկում է Սպէրմին-Պէլը, որի մասին վկայում են աշխարհիս ամենայայտնի բժիշկների բազմաթիւ դիտողութիւնները գրականութեան մէջ։
Սպէրմին-Պէլը միակ իսկական, բազմակողմանի փորձված Սպէրմինն է. այդ պատճառով էլ պէտք է ուշադրութիւն դարձնել „ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ“ անուան վրա և չը գնել կեղծվածները, հեղուկներ և սերմային գեղձերից պատրաստված մահլամներ, որպէս անպէտք նմանողութիւններ, որոնք թէ յատկութեամբ և թէ ներգործութեամբ Սպէրմին-Պէլի հետ ոչ մի առնչութիւն չունեն և յաճախ պարունակում են առողջութեան համար վնասակար տարրեր։
Ցանկացողներին ուղարկվում է ձրիաբար «Цѣлебное дѣйствіе Спермина» գիրքը. ամբողջ օրգանոտէրապիայով հետաքրքրվողներին ուղարկվում է՝ 4 հատ 7-կոպէկանոց նամականիշ ստանալուց յետոյ՝ նոր լոյս տեսած «Цѣлительныя силы организма» գիրքը։
Սպէրմին-Պէլին կայ ամենուրեք։
(№ 1) (П. 8663) 0—6
Профессоръ Д-ръ ПЕЛЬ и С-вья
С.-Петербургъ.
Մատակարար ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾ. Դրան

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный